



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆ -/ից յո. 5 հ-ւ

491.99-54  
12-53

յո. 9-14-Լ

4/5 38թ.

# «ՀՆԵԱԲԱՆԱԿԱՆ»

ՀԱՅԿԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՄԻ ՔԱՆԻ ՄՆԱՅՈՐԴՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ



### ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— «ԱՌԻԻԾ», «ՄՈՐՄ», «ԽԼԷԶ»

21807



ՅԵՐԵՎԱՆ  
1927

Արտատպութուն Հ. Ս. Ս. Հ. Գիտութեան յեւ  
Արվեստի Բնաստիտուաի Տեղեկագրի № 2-ից:

A  $\frac{\text{III}}{881}$

# «ՀՆԵԱԲԱՆԱԿԱՆ» ՄԻ ՔԱՆԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Նախ՝ մի քանի խոսք վերնագրի մասին:

Լեզվական «հնեարանություն» ասելով՝ մենք հասկանում ենք լեզվի «մեռած» յերևույթների հայտնաբերումն ու հետազոտումը, ինչպես վոր այդ գործ և ածվում, որինակ, Մառի կողմից, իսկ բնագիտական այդ հորջորջումը («պալեոնտոլոգիա») պիտի ընդգրկի, ըստ իս, լեզվի մեջ վոչ մի այն նշանակողական կողմը՝ սեմանտիկան, այլև ձևաբանությունն ու հնչարանությունը: «Հայերենի» տակ բնականաբար հասկանում ենք ամբողջ հայ լեզվական խումբը, այսինքն՝ գրաբարը և միջնադարյան ու արդի հայերենները իրենց բարբառներով:

Լեզվական հնեարանությունից մենք վերցնում ենք այստեղ հինգ դեպք, վորոնք վերաբերում են հնչարանության և մասամբ՝ ձևաբանությանն ու սեմանտիկային: Դրանցից յերկուսը հնդեվրոպական ծագում ունին, իսկ մյուս յերեքը՝ հարեթական («խալդա-ուրարտական»), — մի յերեվույթ, վոր գալիս և ավելի ևս պնդելու մեր լեզվի «խառն» (Mischsprache) լինելը: Նիշվող այդ լեզվական յերևույթները, հատկապես առաջին չորսը, հանդես են գալիս պատմականորեն իբրև մեռած, քարացած մնացորդներ թե գրաբարի շրջանում և թե հետագայում, այսինքն՝ դրանք (չորսը) կենսագործող են յեղել մինչև V-րդ դարը, յերբ գիտակցվել են, գործածվել են և կարող եյին անայոգիայով նման նոր տեսակները առաջ բերել:

Վերլուծենք նախ հնդեվրոպական ծագում ունեցող առաջին յերկու հնեարանական մնացորդները:

## I. w (ւ) ՀՆՉՅՈՒՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

Նախապատմական ժամանակաշրջանում յեղել և մի մոմենտ, յերբ մեր լեզուն յուր սրմատների և մասամբ բների մեջ մտցրել և այդ W (ւ) սոնանտ հնչյունը: Իբրև դրա գրգապատճառ կարելի յի վերցնել, ըստ իս, միայն շեշտը: ձևաբանական վոչ մի ազդակ մենք այդտեղ չենք տեսնում, նման, որինակ, արիական vrddhi կոչված որենքին: Հավանորեն, արտասանական սկզբնական «նյութապաշարը» բաշխվել և ավելի քիչ վանկերի վրա, և վեր-

ջին շեշտավոր վանկը, ստանալով W, դառնում է յերկրարբառ («դիֆտոնգ»): Այսինքն, յեթե վերցնենք դիցուք մի mati-արմատը, վորը նշանակում է 'մտենալ', և դեն ձգելով դրա վերջին ձայնավորը՝ արմատը դարձնենք փակ վանկով մի հնչական միավոր, այն ժամանակ դրա մեջ, ձայնավորից յետո, առաջ է գալիս W (ւ) հնչյունը և ստացվում է mawt (մաւտ > մօտ) նոր ձևը:

Մտտավոր անալոգիա կարելի է բերել, որինակ, ուսերենից, յերբ несли դառնում է нёс (նես-լի > նեսս > նյոս) կամ ведро > вёдра, звезда > звёзды և այլն, ուր շեշտի պատճառով առաջ է գալիս օ հնչյունի ներմուծումը, անկախ վանկերի քանակից և հապավումից:

Մառը յուր 1903 թվին հրատարակած գրաբարի քերականության մեջ („Грам. др. арм. языка“, СПб, 1903, էջ 26, § 33) մի խիզախ մփաք եր արժարժում, այն է, վոր նախագրաբարյան յերկար  $\bar{a}$ ,  $\bar{e}$ ,  $\bar{o}$  ձայնավորները մեր գրի պատմական շրջանում, այսինքն՝ գրաբարում, վեր են ածվել յերկրարբառների—«այ» յեվ «աւ» (=a), «է» (=e) յեվ «եւ» (=e), «ոյ» (=o), թեպետ որինակներ և ապացույցներ նա չի բերում: Մենք հակառակ պրոցեսսն ենք ընդունում, այսինքն, վոր սովորական ձայնավորները (վոչ յերկար) գտնվելով բառի վերջին փակ վանկում և շեշտ ստանալով, իրրե հաջորդ վանկի հապավման հետևանք, յենթարկվում են աճման, այն է՝ յերկրարբառացման W սոնանտի հավելումով:

Բայարմատների (կամ բայաբների) այդկերպ փոփոխվելը, իրրե հընչական փաստական նոր դրություն, իմաստարանորեն ևս առաջ է բերում և ստեղծում մեծմասամբ չեզոք գոյականներ, սերված կրավորականի նախկին անցյալ դերբայի նշանակությունից, ինչպես, որինակ, գրտ-անեմ < \*գիտանեմ (հմմտ. ևգիտ 'գտավ') բայարմատից ստացվում է գիւտ, վորը սկզբում ունեցել է կրավորականի անցյալ դերբայի նշանակություն (=գտնված, найденное), յետո դարձել է չեզոք գոյական (=գյուտ, находка), կամ որինակ, հես-ում (=հյուսել) բայը և հեւս (=հյուս) գոյականը, վորը սկզբում նշանակել է 'հյուսված' և յետո՝ 'հյուս' (сплетенное, плетение, плетка):

Իհարկե, բայարմատը կարող է ունենալ և ներգործական նշանակություն, ինչպես, որինակ, լաւատես կարող եր նշանակել գրաբարում թե՛ 'լավ տեսնող' և թե՛ 'լավ տեսնող': Յեվ դրա հիման վրա յե, վոր հին «գաղել» բայը (=ծածկել, թաղցնել), պահված մնալով միայն բարբառներում, ավել է յուր ժամանակին փակ վանկում \*գաւղ > \*գօղ > գող ձևը, իրրե 'ծածկող, թաղցնող', այսինքն՝ ներգործական իմաստով և վոչ կրավորական:

Կան դեպքեր, յերբ այդ աճեցման պրոցեսսը կատարվել է գոյականների սկզբնական (նախնական) արմատում, ուր նշանակության փոփոխության վոչ մի հետք անգամ չի կարող լինել, ինչպես, որինակ, artasu- > artaws-ր կամ areco- (arecu-) > arewe և այլն:

Թվենք մի առ մի բոլոր այն դեպքերը, յերբ ակնահայտնի յե W սոնանտի այդ հնչական «ինտերվենցիան»:

1. Առեւծ < առեծո- կամ առեծու-, հնդեվր. \*reg<sub>1</sub>- արմատից և նշա-

նակում ե թագավոր, իշխան = լատին. rēx (rēg-is), սանսկր. rājān («աջան») id., տես ստորև, հողվածիս II-րդ մասը՝ «Ստուգարանություններ, § 1:

2. Արտաւար < արտասու-բնից, վորը յեղել ե հին \*trasu- < \*tarsu- = հուն. δακρυ, լատին. lacruma (< daeruma), վերին հին գերման. trahan «Thräne» (< \*drak<sub>1</sub>nu-), միջին հին գերմ. traher < \*trahru ձևից, և այլն և այլն (տես Hübschmann, Arm. Gram., էջ 425-426):

3. Գիւտ ձեւը չպիտի համարել անմիջապես հնդեվրոպականից մնացած, ուր մեր «ւ» հնչյունը փոխված ե իբր թե հնդեվր. u-ից (հմմտ. արիական vindati 'գտնում ե', գերմ. finden). դա ևս մեր նիշած հնչարանական (> իմաստարանական) յերևութի նոր կազմությունն ե:

4. Գող պիտի գրել հին ձևով գաւղ > գող, ինչպես և ճիշտ գիտել և Մառը (Грам. др. арм. яз., էջ 10, ծան. 2). առաջացել ե գաղեմ բայից, վորը այժմյան բարբառներումն և միայն մնացել (Թավրիզ, Ջուղա, Ղարաբաղ, Շամախա)<sup>1</sup>, իսկ գրարարուծ այդ «գաղեմ» արձատից կազմված ե «գաղա» բառը և ածանցով (վորից «գաղանի»). հմմտ. այդ «գաղ» - արձատի հետ լետտ. welts 'խարած', welts 'ի գուր', լիտով. pri-vil-ti 'խարել' (տ. ArmGr., էջ 431):

5. Մաւտ > մօտ (=մոտ, близъ) առաջացել և հին «մատ» - արձատից, վորը նշանակել ե 'մոտենալ' = գրար. «մատչիմ—մատեայ» (? > հընդ-յեվր. \*madə-կամ \*modə-, վորը մյուս լեզուներում չի մնացել):

6. Հեւս > հիւս (=հյուս) առաջացել ե «հեսուում» բայից (=հյուսել), վորից կա նաև «հեսկ, հեսկի» գոյականը (=հյուսած բան՝ չվան՝ կապ), դարար. հեսկի 'սրունքի փաթաթան, սոնապան' (Աճառ., 655):

7. Յաւտ > յօտ (=հոտած՝ կտրած ճյուղ) առաջացել ե «յատեմ» բայից = արարատ. ետել). ածանցյալ ձևերն են՝ յատուկ, յատոց (=հոտոց, ետոց):

8. Թաւն > թօն (=թացություն) առաջացել ե «թան-ամ» բայից (=թրջել), վորի անցյալ կատարյալն և «թացի»:

9. Արաւտ > արօտ առաջացել և «արածեմ» բայից «ծ» հնչյունի դեզաստիբիլացիայով (ծ = տս):

10. Աղաւթ > աղօթ առաջացել և «աղաչեմ» բայից «չ» հնչյունի դեզաստիբիլացիայով (չ = թշ):

11. Ամաւթ > ամօթ — «ամաչեմ» բայից նույն ձևով:

12. Ծանաւթ > ծանօթ — \*ծանաչեմ հին ձևից, վորը դարձել և «ճանաչեմ», բայց ստորիստը՝ ծանեայ. ծագումը հնդեվրոպական և (\*g<sub>1</sub>en- 'знать, gnosco, kennen...'): Հմմտ. ըստ նոր ձևի կազմության արար. ճանանչ 'ծանոթ, знакомый':

13. Ակաւս > ակօս հնուս նշանակած պիտի լինի, ըստ իս, 'փխրացրած, մանրացրած (հողաշերտ)' և առաջացած «կասում» բայից, վորը նշանակում և 'կամենել, МОЛОТИТЬ':

14. Գոլ պիտի գրել հին ձևով «գաւլ > գօլ», սերելով «գալ» - արձատից, վորից կա նաև «գաղ-ջ» բառը -ջ՝ ածանցով, ինչպես՝ շուրջ — շուռ,

<sup>1</sup> Տես չր. Աճառյան, Հայերեն գաղառական բոսարան, Թիֆլիս, 1913 թ., էջ 216:

երջանիկ—երանի, վերջ—վեր, ստերջ—լատ. sterilis և այլն:

15. Գեղ > գիղ (= գյուղ) առաջացել և „գեղ“ արմատից. հմմտ. սեռական „գեղջ“, վորից „գեղջուկ“ (ինչպես՝ այր — առն — առնական):

16. Թևր > թիւր (= թյուր, ծուռ) առաջացել և „թերի“ ածականից, վորից նաև „թերենամ“ (= ոտարանալ, отчуждаться), թեպետ ինքը „թերի“ բառը կազմվել և „թեր“ (= կողմ) գոյականից:

Այս մեր նիշած հնչական որևէքին են յենթարկվել թերևս—ա) մար (> մոր) բառը, վոր նշանակում և ‘տղմուտ, ճահճուտ տեղ’ (հմմտ. նաև „Մեծամոր“ — Սեվջուր գետի անունը) և դուրի հայկական հավասարաթեքն և գերմաներեն Moor բառի (‘болото, топь’), յերկուսն էլ հնդեվր. \*mar-բնից(?). б) բաղ > բող մի տնհայտ \*բաղ-եմ բայից ‘ծածկել’ նշանակությամբ. с) -առատ > -առոտ (համ-առոտ, կարճ-առոտ), իրրև բառամաս, առաջացել և \*-առած ձևից, ինչպես „արոտ“-ը > „արած ձեմ“ բայից, իսկ այդ \*-առած նախածեր կարող եր նշանակել կամ ‘վերցրած’ կամ ‘ասված’. թերևս ալաշկերացոց և մշեցով ‘ճշնարոտ’ բառը նման կազմություն ունենա (= ճիշտ առած, ճիշտ ասած)<sup>1</sup>: Համեմատիր նմանապես մեր տաւն > տոն բառը, վորը Մառը կապակցում և հին վրաց ჭადბ „ժանա“ (= званый пир, праздник) բառի հետ, և մեր -խրախ-ճան“ բառի յերկրորդ մասի հետ<sup>2</sup>:

Արդյո՞ք, այդ W սոնանտի „ինտերվենցիոն“ ազդեցությունը չէ, յերբ մեր հին «ուսյալները», ինչպես Hübschmann և հորջորջում, հունարեն ω („ոմեգա“) յերկար օ հնչուներ վերարտադրել են հայերեն „ով“ գրությամբ, ինչպես՝ ովկիանոս, Թովմաս, Յակովբ և այլն, ուր „վ“ տառը գործ և անվել թերևս „ւ“ սոնանտի փոխարեն, վորպեսզի „ու“ (= ուս. զ. լատ. u.) չստացվի և չկարգացվի՝ ուկիանոս, Թոււմաս, Յակուր և այլն. և հետևապես „ով“ գրությունը, իրրև օ հնչյունի յերկարացման նշան, պիտի կարգալ իրրև օW, այսինքն՝ ոուկիանոս, Թոոււմաս, Յակուուր և այլն:

Մենք կարծում ենք, վոր վերեվում բերված որինակաները միանգամայն բավական են ապացուցելու W սոնանտի այս նախագրաբարյան դերը փակ վանկում, վորով առաջ և գալիս, թեպետ սպորադիկ ձեվով, մի նոր հնչական որենք՝ շեշտի հետեվանքով առաջացած անում, „յերկրարբառացում“:

## II. an-նԱևԱԾԱնՑ (‘վրա, վրայով, դեպի’).

Գրաբարից և մեր բոլոր բարբառներից հայտնի յե, վոր գոյություն ունի ժխտական ան-նախածանցը, ինչպես, օրինակ, անտեղի, անտէրունչ, անգեղ, անմեղ, անգէտ և այլն բառերի մեջ: Սակայն, կան վորոշ քանակու-

<sup>1</sup> Ոչինակ. «Ճանձը դու ևս կերել.— Զէ, ճշնարոտ, խարած չեմ ես» տեւ, Սահ. վ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1910, էջ 442:

<sup>2</sup> Տեւ Н. Марр, Яфег. элементы в языках Армении, II, СПб, 1911, ИИАН, էջ 471, ուր բերված որինականերին պիտի ավելացնել նաև մենգրերական խԾ «ճան-» արմատը (‘приглашать, звать’, տեւ I. Кипшидзе, Грамм. мингрельского (иверского) языка, СПб, 1914, էջք 387-388):

թյամբ բառեր թե՛ գրարարում և թե՛ մեր բարբառներում, ուր դոյություն ունի, ըստ իս, մի այլ նախածանց, վոր ժխտական իմաստ չունի: Այդ ան- նախածանցը գրարարյան շրջանում իսկ մեռած տարր եր, հասնելով մեզ հարկավ սոսկ իբրև քարացած մի մնացորդ, իբրև իսկական պալեոնտոլո- գիական մի նստվածք: Համեմատական հնախոսական մեթոդը, ըստ իս, բավարար չափով հնարավորություն և ընձեռում՝ վերականգնել այդ ան- նախածանցի վաղեմի ֆունկցիան և նշանակությունը, ի նկատի ունենալով, իհարկե, հասած նյութը. այդ կողմից նիշելի յե բարբառների առաջնու- թյունը՝ հանդեպ գրարարի: Բայց, նախապես բերենք բոլոր դեպքերը —

1. Անձեռոց, անձեռոցիկ — գրարարում նշանակում և ‘ձեռքի սրբիչ, сапфетка՝ և կազմված և ան-ածանցից յեվ ձեռ(ք) բառից (= ձեռքի վրա, ձեռքի համար):

2. Անոտնեայ — գրարարում նշանակում և ‘թագավորական գահի կամ աթոռի տակի պատվանդան՝ (տես Ամատ., էջ 38)<sup>1</sup>, առաջացել և անոտին պարզ ձևից (= վոտքի տակ, վոտքի համար):

3. Անոտք — գրարարում, ըստ Առձ. Բառարանի, նշանակում և ‘վոտքին կողմը, վոտքին ծայրեն դուրս. թուրք. այագ թարաֆա՝:

4. Անկողին — գործ և անվում թե՛ գրարարում և թե՛ արդի բարբառնե- րում և մեզնից անցել և քրդերին kulin ձևով. բուն նշանակությունն և ‘կողքի վրա, կողքի համար՝:

5. Անոռի — ‘կաշիյե լայն փոկ՝ վոր ձիուն պոչին տակեն և գավակին վրայեն անցնելով՝ համետին յերկու կողմերուն կապված և՛ (Հ. Աճառ., Գավ. բառ., էջ 106): Հմտ. արարատյան վոտեէն և խոյեցոց „ոտատայ“ — id. (Ամատ., 704):

6. Անրահի — մշեցոց մոտ նշանակում և ‘բահակոթի վրա հազցրած տա- փակ փայտը, վորի վրա վոտքը դնելով՝ զարկելով փորում են. տաճկ. թափչագ՝ (Ամատ., էջ 61, „ասպարակ“ բառին կից):

7. Անթուկել — մոկացոց և վանեցոց մոտ նշանակում և ‘նետել, շպլըր- տել, դուրս նետել, արմունքով հրելով վար ձգել՝ (Աճառ., 99). արմատն և „թորկել“, վորը գործածական և մի շարք բարբառներում ‘թողուլ, ձգել՝ նշա- նակությամբ (ibid., 376) և, հատուկ լինելով միայն Հայաստանի այդ հարա- վային բարբառներին<sup>2</sup>, ըստ իս, սեմական փոխառնություն պիտի լինի = արարերեն ك ج , „թարաքա-հու“ (‘ОН ОСТАВИЛ ЕГО՝):

8. Անթիել — խարբերդցիների մոտ նշանակում և ‘թոնիրին կողին կըպ- ցված լավաշը ինքնին փրթելով թոնիրին մեջ իյնալը՝ (Աճառ., էջ 99). կազմ- ված և «թափել» բայի չեղոք նշանակությունից (‘ընկնել, падать՝), վորը գործածական և և այժմյան արարատյանում (որինակ, աշտար. «հողը թափեց վրին», «դեղձերը թափել են տակը» և այլն):

<sup>1</sup> Գործ և անվում Գր. Խալաթյանի հրատարակած «Գիրք մնացորդաց»-ում (Մոսկվա, 1899) այսպես. «Եւ արար արքայ գաթոնն փղոսկրեայ և պատեաց զնա ոսկեով քաջաւ, և վեց աստիճան աթոռոյն ոսկեով պատեալ, և անոտնեայ մի ոսկի աթոռոյն» (տես Ամատ., էջ 38):

<sup>2</sup> Գործ են անում Ալաշկերտ, Արձեշ, Բուլանըխ, Բաղեշ, Խլաթ, Մոկ, Մուշ, Սասուն, Սուրմալու, Վան (տես Աճառ., էջ 376):

9. Անձողել (փոխանակ՝ անցողել) — վանեցոց մոտ ունի նույն նշանակութիւնը, ինչ վոր արար. «ցողել — կաթոտ, թանոտ ամանների ողողելը» (Ամատ., 646): Հմմտ.՝ անցող (Ապար., Սիփ.) — խնոցին հարելուց յետո նրա մեջ լցրած ջուրը, վորով ողողում են» (Ամատ., 40 = մշեցոց «ցողուցք»), «ցողուանք (Մուշ. Ապրն, Շրկ, Ալշկ.) — կաթոտ անոթեղենների լվացած ողողած ջուրը» (ibid., էջ 646)<sup>1</sup>:

10. Անթեղել — նշանակում է (Արբ., Երև., Խրբ., Ղրբ., Մանխաս)՝ կրակին մնացորդները տաք մոխիրին մեջ ծածկել՝ մյուս որվա համար՝ իսկ Տրապիղոնում՝ «հավկիթի, շափանակի, դետնախնձորի վրա կէն տաք մոխիր քաշել՝ տակը խորովելու համար» (Աճառ., 98): Ինչպես տեսնում ենք, այդ գործածութիւնների բուն հիմնական նշանակութիւնն է «տաք մոխիրի տակ մի բան ծածկել»: Սակայն, նփրկերացոց և թերևս արարատյան բարբառը տալիս են ավելի ընդհանուր նշանակութիւնը, այն է «անթղել (նփրկերտ՝ Մուֆարդին) = թաղել, ընդհանուր իմաստով, որինակ — «կուժը գետինը անթղեց» (ibid., 99): Արարատյան բարբառում այժմ գործ են ածում (Վղրշ., Աշտր.) «անթըխտել» բայը, իբրև մի բան՝ տակով անել, ծածկել, անհետացնել և փոխաբերաբար՝ մի բան կլանել, հափշտակել (ըստ իմաստուգման). Աճառյանը տալիս է «անթթխել, անթխթել» յերկու ձևերը, այն ինչ Ամատունու բառարանը և Պ. Պոռոյանի գրվածները տալիս են միայն «անթթխել» ձևը<sup>2</sup>: Նփրկերացոց «անթղել»-ը և թերևս արար. «ան-թըղ-տ-ել» բայը միասին վկայում են՝ տակով անել, ծածկել՝ ընդհանուր նշանակութիւնը: Ծագումը գալիս է կամ «թաղ-ել» սովորական բայից առ՝ «վրա, տակը՝ նախածանցով, կամ զուտ գավառական «թեղ» գոյականից, վոր նշանակում է՝ կամեած, բայց դեռ հարողը հմաքրած ցորենի դեղ՝ (Բիւթ. Երև. Խրբ. Ղգխ. — տես Աճ., 357)<sup>3</sup>: Հետևապես անթեղել > անթղել > անթըղտել բայը սկզբում նշանակել է թեղի (թմբի) տակ անել, վրան թեղ (հողաթումբ) քաշել՝ կամ թաղել (= накрыть, подкрыть):

11. Անդցել — մշեցոց մոտ նշանակում է «գթալ, խըղճալ» (Աճ., 97), վորը, թերևս, կազմած լինի առ- և տած-եմ՝ հոգալ, պետ ընել (գրաբարուֆն և միայն մնացել) ձևերից:

12. Անդլել — արարկիրցոց մոտ նշանակում է «հիվանդի մը տաքության մեջ զառանցելը» (Աճ., 96—97): Հմմտ. արարատյան դէլը տալ՝ «զառանցել» (մ՝ հնչյունով), վորը Աճառյանը «ընդ այլ» ձևից է սերում (ibid.):

13. Անտըկել — Նոր-Բայազետում և Վաղարշապատում նշանակում է

<sup>1</sup> Աճառյանի բառգրքում «անցողել (անցող)» ձևը չկա, բայց կա պարզ «ցողել» բայը ընդհանուր նշանակութեամբ՝ ջրով շփել՝ լվանալ, всполоснуть, ինչպես — «ցողուել (Եփոսկիա, Մալկարա, Պոլ., Տրապ.), ցողուել (Սիփրիսիասար) = ողող տալ, Ղարաբաղում՝ բիշ մը ջրով լվալ՝ (էջ 851): Բոլորի արմատն է իհարկե՝ ցող (роса), վորից կա նաև. «ցողալ անձրեին շաղալը, շատ բարակ տեղալը (Խարբ.), կաթիլ, կայլակիլ (Ակն)». Պոլսում՝ ցողել՝ շատ թեթև անձրեկել, (ibid., 1059):

<sup>2</sup> Ամատ. էջ 32. «անթըթխել — մի բան գողունի պահել, թազցնել (գրպանում, ծոցում, քղանցքի տակ և այլն)». տես նաև Աճ., էջ 99. «Անթթխել (Երև.) — թաքուն կերպով կամացուկ մը գողնալ»:

<sup>3</sup> Աշտարակում այդ թեղը կաղմվում է յերկար թմբի նման, ինչպես այդու թումբը: Արդյոք այդ «թեղ»-ը սեմական «թիլ» նույնիմաստ բառի փոխառութիւնը չէ:

«տակով անել, ծածկել» (ըստ իմ հարցմունքի), առ - և «տակ» ձևերից: •

14. Անգտել—Մանխառնում նշանակում է (Աճ., 95) «խիստ հայհոյել, վորը կապում են «անագ» (=олово) բառի հետ (ibid.), իբրև թուրքական նման բայի թարգմանություն» ('qalaylamaq 'անագով զօծել'. փոխար. 'կոշտ մը հայհոյել') Ըստ իս, ավելի հավանական է այդ «անգտել» բայը կապել «անկտի» (Չավախք) բառի հետ, վորը նշանակում է 'Ջրկիրների լծակ' (Ամատ., 37)<sup>1</sup>, ինչպես հիմա արար. բարբառում ասում են «կոթել» 'կշտամբել, վիրավորել' «կոթ» գոյականից, իսկ «անկտի» բառի հետ մենք կը համեմատեյինք «կետի (Երև.)—գավազան, մահակ, հաստ փայտ» (Աճ., 569): Սակավ հավանություն կա -gətel յերկրորդ մասը կապակցել գրքարի «կտտեմ...չարչըրկել, կճել, խայթել, ծակծկել» բառի հետ:

15. Անկոսնեմ || անգոսնեմ—գրաբարում նշանակում է 'վար զարնել, արհամարհել'. նմանապես «անկուշեմ || անկուշնեմ—'աքացել, վայր քցել': Առաջին ձևից կազմված է նաև «անգոյսք—'կիցք, աքացի', վորը, ըստ իս, ուղղելի յե «անկոյսք»: Դրա արմատը գոյացել է, հավանորեն, առ-նախածանցից 'դեպի այն կողմը, դեպի մի բանի վրան' և կույս 'կողմ' գոյականից, այնպես վոր սպասելիք անկուսեմ ձևը պիտի նշանակեր 'նետել դեպի այն (վարի) կողմը, устранять': «Անգոյսք»-ը (< անկոյսք) այնպես է կազմված «անկուսեմ» սկզբնաձևից, ինչպես «անոտք»-ը՝ մի գործածված, բայց չպահված «անոտնեմ» նախաձևից և ինչպես արար. և մշեցոց «անծերք»-ը (Ամատ., 101) 'սանտրի ատամների վրա թել կամ մազ փաթաթած՝ վոջիլները և անիծները հանելու համար, թերևս, կազմված լինի մի «անծերել» բայից (Աշտարակում՝ անծէրք), թեպետ մանազկերացիք<sup>2</sup> ասում են «անծքեր», վանեցիք «անծկերտ» և դարար. «անծկեղ տալ» (Աճ., 101):

Մեր բերած որինակները, յեթե վոչ բոլորը, գեթ նիշող մեծամասնությամբ միանգամայն հաստատում են, ըստ իս, այդ առ-վրա, վրայով. դեպի այն կողմը՝ նախածանցի գոյությունը, վորի համար մեր բարբառները ավելի շատ որինակներ են պահել, քան գրաբարը,—մի յերևույթ, վոր գալիս է նորից հատկանշելու մեր բարբառների ուսումնասիրության կարևորությունը:

Այդ առ-նախածանցը յեղել է նախագրաբարյան հնագույն շրջանում կենդանի գործածականը և գիտակցելին:

Սակավաթիվ մնացած նմուշներից այն կարելի յե մակարերել, վոր՝ դրվելով գոյականների վրա (անձեռոց, անբահի, անոտի, անկողին)՝ նա նշանակել է մոտավորապես 'վրա, վրայով, համար, իսկ դրվելով բայերի վրա նշանակել է 'դեպի այն կողմը՝ տակը, վրան' (հմտ. անթուկել, ան-

<sup>1</sup> Հմտ. «ակտի (Ախլք.) յերկար և հաստ փայտ, վոր Ջրկիրը ուսերուն կը զարնե և վորուն երկու ծայրերեն կը կախվին ջրի դույլերը» (Աճ., 68), «կնտի (վան) սանդիտուն [վարսանգ], հավանգի կոթ» (ib., 582):

<sup>2</sup> Տանս գաղթական մանազկերացի կանայք իրենց հաղորդած այդ «անծքեր»-ը բացատրում են իբրև «անիծ-քերոզ»: Աճառյանն էլ յուր բառգրքում արմատը «անիծ»-ն է վերցրել (անծ-կերտ, անծ-կեղ), բայց չի՞ կարելի, արդյոք, ընդունել, վոր արար. և մշեցոց «անծերք» ձևը յեղել է սկզբնականը և դրափոխությամբ դարձել է «անծքեր», իսկ վերջինս > «անծկերտ», և հնչյունի հավելումով: Անհասկանալի կը մնա, սակայն, դարաբաղցոց «անծկեղ» ձևը:

թփել, անցողել, անթեղել, անդցել):

Հայոց այդ ան- վերականգնելիք ածանցի ծագումը հնդ-յեվրոպական է, և դրա համարժեքներն են այլ լեզուների գրեթե նույն գործածության նախածանցները—հուն  $\alpha\nu\alpha$ —‘ $\beta\epsilon\rho\epsilon\chi, \rho\omicron, \rho\epsilon\rho$ ’, գոթական  $ana$ —‘գեր, ան-մոտ, վրա’, սանսկ.  $ana$ — $id.$  և այլն:

Իրավելով թե գոյականների վրա (տրական հոլովով) և թե բայերի՝ այդ ան- նախածանցը այժմ մեզ համար հանդիսանում է իրեն հնագույն այդ նախագրարարյան դերովն ու նշանակությամբ սոսկ իբրև մի իսկական լեզվա—պալեոնտոլոգիական մնացորդ, նման վերոնիշյալ  $W$  սոնանտի յերբեմնի «ինտերվենցիոն» դերին:

III. ՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ («ՇՆՁԵՂՆԵՐԻ») ԱԼՏԵՐՆԱՑԻԱՆ ԲԱՌԱՍԿԶԲՈՒՄ

$$\check{s} \parallel h (x), \check{z} \parallel y, s(c) \parallel y \dots$$

Մեր լեզվում կան վորոշ քանակությամբ բառեր, վորոնք մի ժամանակ յենթարկվել են ձայնափոխական այս որենքին— $\check{s} \parallel h (x), \check{z} \parallel y, s (c) \parallel y$ : Ինչպես տեսնում ենք, մի կողմից շչային և սուլիչ հնչյուններն են ( $շ, ժ, ս, ծ$ ), իսկ մյուս կողմից՝ շնչեղները ( $հ, խ, յ$ ):

Այս ալտերնացիան կատարվել է հայկական հողի վրա, այն ել՝ գրարարյան շրջանից շատ առաջ, և բառարմատներին պատճառել է նոր նշանակողական նրբություն, առաջ բերելով նոր հոմանշություններ: Արդյոք, արտացոլվել է այստեղ մեր նախկին բարբառների հնչափոխական դերը, այդ մենք դժվարանում ենք ասել, վորովհետև այդ յերևույթը կարող էր լինել թե՛ շարունակությունը Հայաստանի «նախարիական» տարբեր լիզուների ազդեցության և թե՛ կարող էր նաև հետագայում, անկախ կերպով, առաջ գալ, իբրև արդեն «հայկական» լեզուների ստեղծագործություն:

Թվենք մի առ մի մեր հավաքած այն բոլոր բառերը, վորոնք իրենց սկզբում կրում են մեր նիշած այս հարեթական հնչափոխական որենքը, վորը յուր հերթին հատուկ է յեղել սիրիլանտ և սպիրանտ հարեթական լեզվաճյուղերին<sup>1</sup>: Վերցնենք նախ  $\check{s} \parallel h$  ալտերնացիան և ապա  $\check{s} \parallel x$ :

$$\check{s} \parallel h$$

1. Շոգի (=գոլորշի)  $\parallel$  հոգի: Առաջին բառի հետ կա նաև ածանցյալ «շոգոլի» նույն իմաստով (‘գոլորշի, շոգ, գոլ, հառաչանք՝ ԱռԲ.), իսկ յերկրորդ «հոգի» բառի հետ կա «ոգի» ( $id.$ ), առանց ի շնչյունի, ինչպես

<sup>1</sup> Սիրիլանտ ճյուղը հարեթական կովկասում բաժանվում է յերկու ստորաբաժանումների՝ սուլիչ և շչային. առաջինն է բուն «քարթականը», իսկ յերկրորդը՝ ճանա-մեզրեկականը. առաջինին հատուկ է «ս, դ, ծ, ձ, ց», իսկ յերկրորդին՝ «շ, ժ, ճ, ջ, չ»: Սիրիլանտ ընդհանուր ճյուղի  $s (u)$  և  $\check{s} (z)$  հնչյուններին համապատասխանում է սպիրանտ ճյուղի (=մասամբ սվանական է և հայերենը)՝  $h$  հնչյունը, սիրիլանտ ճյուղի  $z (q), \check{z} (d) =$  սպիր.  $y (յոտա), սիր. \check{c} (y), \check{c} (z) =$  սպիր.  $x (խ), սիր. c (ծ), \check{c} (\acute{a}) =$  սպիր.  $k (վր. y), սիր. j (\acute{a}), \check{j} (\acute{z}) =$  սպիր.  $\gamma (ղ)$ :

ուենենք՝ հորթ և որթ (теленок), հաւատամ և աւատամ, հսկայ և սկայ և այլն: Ծագման տեսակետից՝ նախաձև «շոգի»-ն հավանորեն առաջացած լինի «շոգ» («տաք») արմատից, ինչպես՝ գոլորշի < գոլ-ից:

2. Շունչ || հունչ-ք, վորոնցից—շնչեմ || հնչեմ: Ըստ ծագման, նախաձև «շունչ»-ը յեղել և հին արտասանությամբ «շունջ», վորը պիտի համարել իվերական suri («շուրի»)՝ душа, дух, запах՝ ձևի համապատասխանը հայերենում (ը || ջ ալտերնացիայով), ինչպես՝ կինջ (> կինձ) = մինգր. լըջո («ղեջի»)՝ «свинья», ալանջ = մինգր. յըջո («կուջի») վրաց զըճո (kuri), ճանջ = մինգր. թ-թոջո (մ-ճաջ-ի) վրաց թ-թըճո (մ-ձեր-ի) և այլն<sup>1</sup>: Հայերենում ևս կա այդ «ը||ջ» որենքը, ինչպես—մարմաջ, արար. մրմունջ՝ «կսկիծ» և արար. մուռ «կսկիծ, վոխ»,—գողգոջ և գող-ամ,—պաղպաջ-եմ և զավառական պլպլալ, պղպղալ,— ճառ-ա-գայթ և ճա ճանջ (ճառ- || ճա(ն)ջ), ուր այդ «ճառ»-ը (=луч) այնպես և հարաբերում կազմությամբ զավառական «ճառագիլ» բային (= «արեին կամ ասողերուն լիափայլ ճառագայթելը, լուսավորելը», (Ակն. Ապ. Երև. Լ. Ղ. Ղրբ. Պլ..., տես Աճառ., 707), ինչպես «նոր»-ը հարաբերում և «նորոգ-եմ» ձևին, ձայնավորների պրոպրեսիվ ասսիմիլացիայով: Անշուշտ նման կազմություն և հնչափոխություն ունին՝ բողբոջ, տրտունջ և բնաձայնական՝ շրշունջ (> շշունջ), մրմունջ՝ «бормотание» (հմմտ. շան մոմոալ-ը), խրխինջ (= վրաց chirchiri) և այլն:

3. Շողոր-որթ || ողոր «моление, лесть»: Վերջինս առաջացել և \*հողոր սկզբնաձևից, կորցնելով «հ» շնչյունը, ինչպես մալնանշված—հոգի > ոգի, հորթ > որթ, հավատամ > ավատամ և այլն: Մտուր այդ «շողոր- || ողոր» ձևերը համեմատում և վրաց სლგჟა (սլեքա)՝ «гладить, делать мягким» և սեմական «խլկ» արմատի հետ (վորը մնացել և արաբերենում և հերբայեցիկներենում, հմմտ. արար. خلق «гладкий»)<sup>2</sup>: Բայց հայերենում կա նաև «յղկել» արմատը, վորը, ըստ իս, նույն շլկ || հլկ > յլկ խմբին և պատկանում:

4. Շարաւ «փտտած արյուն, թարախ» || հալալ: Վերջինս գործ և ամվում Բուլանըխի բարբառում (Ամատ., 383) և նշանակում և «կնոջ դաշտան, արյունահոսում»: Վրացիք յերևի մեզնից են փոխ առել შალლი (շալալի) և შარავი (շարավի)՝ «гной, материя из ран» (Чубин., Груз.-рус. сл., СШБ, 1887, էջ 1393):

5. \*Շերդ- (\*շարդ-) || \*հերդ- (\*հարդ-): Այս հնագույն բայարմատը, իրեն արտասանական հին ձևով, նշանակել և, ըստ իս, ընդհանրապես «ձեղքել, spalten, раскалывать», հետո նաև «կտրել, խզել»: Առաջին \*շերդ- (\*շարդ-) շչային ձևը պահել են— a) շերտ «ջարգած փայտ, կտոր (արար. «ժղան»), ցանկի ցից», վորից շերտավոր «տապարավոր, տիգավոր». b) շառտ-եմ «ձեղքում»: c) շեշտ «սուր, կտրուկ» rd > sd (> st) փոխանցմամբ, ինչպես՝ կորդ > կոշտ. d) ջարդ-եմ թե գրարարում և թե բարբառներում (Երև. Պլ.

<sup>1</sup> Այդ ստուգաբանությունները (շունջ, ալանջ, ճանջ) Մատինն են:  
<sup>2</sup> См. Н. Марр, Осн. табл. к грам. др-гр. яз., 1908, էջ 6, ծան. 8: Արարատյան բարբառում գործ են ամում սղալիլ՝ «շոյել, гладить по волосам», վորը, ըստ իս, վրացիերենից «սլեքա» փոխառությունն և հմմտ ըստ այդ «սղ < սլթ» — սղալ «ошибка» «սխալ»-ից:

Ղրբ. Տփ... ) հավանորեն նույն sard- բնից առաջացած լինի ( > \*ժարդեմ > ջարդեմ), նշանակության քիչ փոփոխմամբ: Այս շջային խմբին և պատկանում և դարար. շղարջ կամ շղարթ (> շղարթ) բառը, վորը նշանակում և 'ձմերուկի, սեխի ևլն յերկարությամբ կտրված շերտ', «ղ» հնչյունի նոր դարգացմամբ: Յերկրորդ \*հերդ- (\*հարդ-) ձևը 'ճեղքել > կտրել > խզել > խուզել' նշանակողական փոխանցումներով պահել են — a) հերծ-ում հերծանեմ (անց. կատ. հերծ-ի) 'ճեղքել, պատռել', հմմտ. հերծ-ած 'պատռվածք հողի, ակոս, անվաղ', հերծ-ում 'աղանդ, раскол', հերծ-ա-թև 'թևերը ճեղք ունեցող (թռչուն)' ևլն, ուր „հերծ-“ ձևը այնպես և առաջացել նախկին \*հերդ-ից (j < d) ինչպես՝ հեղձ-նում (հեղձ-անիմ) և խեղդ, յորձ-անք և յորդ, նա-խանձ (հարեթ. na- ածանցով) և խանդ, արար. բլնձորել < բլնդորել (< բնդորել) և այլն. b) գավառական հերթ-ել (Արբ.) 'ծառը յօտել' (Աճ., 656), վորը գործ և անվում նաև Աշտարակում նույն իմաստով, — հարթ-ել 'ծառին ճյուղերը կամ տերևները կտրտել (Արարկ.), բուրդը կտրտել, խուզել (Կարին)', տես Աճ., էջ 642. c) գավառական հերթ 'очередь' (Երև. Ղգ. Ղրբ. Տփ., էջ 656) բառը, անշուշտ, մեր հերդ- 'կտրել' արմատին և պատկանում, նշանակելով 'մաս, բաժին', ինչպես ուսաց раз 'անգամ' և разить || резать 'կտրել', բայց կա և վրացերեն ხვედრო (խվեղրի) 'часть, доля; надел' (Чуб., 1743): Իսկ յեթե ընդունենք, վոր \*հերդ- արմատը կարող եր իրեն հ շնչյունը կորցնել, ինչպես հողի > ոգի, հորթ > որթ ևլն, այն ժամանակ կը ստանայինք \*erd նոր ձևը, վորը, հավանորեն, պահված և գրաբարի երիթ 'սեպ, клин' բառի մեջ (հմմտ. колоть և клин), այնպիսի հնչական փոփոխությամբ՝ գուտ գավառական, ինչպես, որինակ, գրաբարի որդ > որդի 'գավակ' ձևը դարձել և վանեցոց մոտ «որէթ» ('վորդի, գավակ', Աճ. 863)<sup>1</sup>. Իսկ վոր գրաբ. «որդ» ձևը (առանց «ի» վերջավորության) նախնականն եր, քան պատմական «որդի»-ն, դրա համար հմմտ. — օրիորդ, այգորդ, որսորդ..., ինչպես արար. «իրն ալ սարիլ» = ձանապարհի վորդի > ձանապարհորդ<sup>2</sup>:

6. Ծուռ (ժուռ) || հիռ: Առաջին «շուռ» ձևը գործ և անվում թե գրաբարում և թե արդի բարբառներում և «ջ» ածանցի հավելումով տալիս և մի նոր ձև ևս՝ շուրջ, ինչպես — գու - գաղջ, վեր - վերջ, երանի - երջանիկ և այլն. «ժուռ»-ը գործ և անվում միայն մեր բարբառներում (Ախլ. Ախբ. Ակն. Խրբ. Կր. Վն..., տես Աճ., 394) և նշանակում և 'պտույտ': Իսկ յերկրորդ «հիռ» ալտերնացիոն ձևը տալիս և միայն գրաբարը, ինչպես — հիռ գամ 'ման գալ, ժուռ գալ, պտտիլ', — հիռ շրջանակեմ 'ժուռ անել, պտտցնել':

<sup>1</sup> Մաթեմատիկորեն կասեյինք — \*երդ : երէթ = \*որդ : որէթ: Իսկ ինչ փոխարարության մեջ են այս \*herd-ի հետ գրաբ. քերծում (գերծում) 'մաղերը խուզել, անիլել' և քերթեմ 'մորթաղերծ անել': Արդյոք, այդ քերթ- || \*քերտ- (> քերծ-) ձևերը «թավացումը» չեն \*հերդ- հին ձևի: Կա և մեկուսացած մինգր. քերց-ուա «резать, отсекать» (Кипш, էջ, 342), վորը, թերևս, թուրքերենից և:

<sup>2</sup> Թերևս այդ -որդ (СЫН) ածանցն և նաև գասական թվականների մեջ՝ երկ-ը-որդ եր-ը-որդ և այլն:

§ || X

7. Շրտ-նում (սարտ-նում) || խրտ-նում (հարթ-նում): «Շրտնում» (անց. կատ. շրտեայ) նշանակում է 'խրտիլ ու վեր վեր իյնալ, շվարիլ. գինքը կորսնցնել. պուշ պուշ մնալ, աչքը միտքը մթննալ' (Ա.Ռ. Բ.). այդ բայը պահել են նաև մեր բարբառները—կարնո գաղթականների<sup>1</sup> մոտ «քունս շրտավ» (=քունս վախավ), իսկ յերկրորդական ածանցական նշանակությամբ՝ վանեցոց մոտ «շերտել, շրտել 'աչքը պաղել, անթարթ հառած մնալ' (Աճառ., 826, 847): «Սարտ-ն-ում» կամ «սարտ-չ-իմ» (աոր. սարտեայ) = 'խրտչիլ, վեր ցաթքել, փախչել' (Ա.Բ.): Յերկրորդ ձևերը (խրտնում, հարթնում) նույն նշանակություններն ունին—խրտ-ն-ում կամ խրտ-չ-իմ (աոր. խրտ-եայ) 'խրտիլ: խրչիլ' (ibid.), հարթ-ն-ում կամ հարթ-չ-իմ (աոր. հարթ-եայ) 'խրտելով դուրս ցատքել, վախեն վեր ցաթքել, քաշվիլ, փախչիլ' (ib.): Խրտնել բայը գործ է ածվում նաև բարբառներում (Սեվրիհիսսար, ՆորԲ., Խնուս..., տես Աճ., 496), վորի արմատն է գրաբարում խիրտ 'ПУГЛИВО':

8. Շէթ- || խէթ-: Բայարմատների բուն նշանակությունն է 'կճել (УЖАЛИТЬ) > կսկծեցնել, այրել': Այդ յերկու ձևերն էլ տալիս է գրաբարը— a) շիթ-եմ 'խայթել', շիթ-ոց 'խայթոց' (Ա.Ռ.),— b) խէթ 'բղձի խայթ, խրղճ-մտանք. խիթք՝ խոստուկ, ցավ', խիթ-եմ 'խիղճը դարնել', խիթ-ումն (-ման) 'խղճմտանքի խիթելը. կասկած, վախ' և այլն: Հավանորեն, յերկու այս արմատաձևերը (շէթ- = խէթ-) դուրս բարբառային ձևեր լինեն, ուր հնում իսկ կար այ > է: Այդ վերապահումով մենք «շէթ- || խէթ-» ձևերի համար կը գնեյինք հին «գրաբարյան» \*շայթ- (|| շեյթ-) և խայթ(-եմ) սովորական ձևերը: Առաջինը (\*շայթ-) կարող էր «յ || ն» ալտերնացիայով դառնալ «շանթել», վորը պահել են մեր բարբառները—շանթել 'ոձի նման խայթելով կսկծեցնել, ցավցնել (Երև.), այրել, գաղել (Շուլ, տես Աճ, 821), ինչպես և յերկրորդը (խայթ-) \*խանթ- միջաձևով դարձել է գավառ. խանչել (խայթ- > \*խանթ- > խանչ-), վորը նշանակում է 'ուտելիքի մը յերեսը այրել՝ մեջը հում մնալով (Ղրբ.), կսկծացնել' (Տրապ., ib., 451), կամ ըստ Ամատունու (եջ 265)՝ խանչել 'ոձի և կարճի խայթելը. նաև կծու խոսքով վիրավորել', խանչխանչ գալ 'խայթվածից կամ ծեծ ուտելուց խիստ սղաղակ հանել' (Աշտարակում՝ խանչխանչ գալ = ցավից ջղաձգորեն կսկիծ արտահայտել, մորմոքվել): Խայթ- արմատը յենթարկվում է նաև այ > ա հնչափոխական դուրս բարբառական ձևին, թ || տ ալտերնացիայով (ինչպես՝ ցայթ-եմ || ցայտ-եմ, կայթ-եմ || կայտ-առ և այլն). և ստանում ենք—նա-խատ-եմ 'կշտամբել, УКОРЯТЬ' (ինչպես խանդ—նա խանձ, հարեթական на նախա-ժանցով<sup>2</sup>), խած-անեմ 'խածնել, խոթել, խայթել, կճել, դարնել (ոձի, կարճի). սիրտը գաղել, խշխշեցնել' (Ա.Բ.). նմանապես «խայթեմը»-ը գառ-

<sup>1</sup> Այդ ձևը ինձ հազորդեց մանկավարժ Տ. Ռաշմաճյանը, իբրև յուր մոր վաղեմի արտահայտությունը:

<sup>2</sup> Ինչպես օրինակ, վրաց Եաղբի (նա-լեսի) 'точный, լես-ած', Եաժաճի (նա-տանջի) 'измученный, տանջված', Եաժաճի (նա-աթալի) 'десятая часть, доля' (աթի '10' բառից) և այլն և այլն:

նում և «խթեմ» (խոթեի, դպչիլ, հրեի, մշտեի, կճեի, դրդեի), ինչպես — գայթեմ > գթեմ:

9. Շեղ (շիլ) || խեղ: Առաջինը (շեղ) նշանակում է գրարարում 'ծուռ', և ինչպես «ձեղ<sup>1</sup>»ը (Արար. Ղրբ. Ղազ. Տփ.) յուր e > i փոխանցումով դառնում է գրարարի «ծիլ» «ծիզ» 'ճյուղ', այնպես էլ «շեղ»-ը > շիլ 'КОСОПЛАЗЫЙ': Իսկ յերկրորդ «խեղ» ձևը նշանակում է 'ծուանդամ', ԿՅՇՆՅՈՒՄ, տղեղ, ինչպես — խեղ-եմ 'մեկ անդամը կտտրել', խեղ-կատակ 'անշնորհք կատակ անող', խեղտեսակ 'տղեղ', խեղաթիւրեմ 'ծուիլ, խոտորիլ', խեղարարութիւն 'բարձր անշնորհք ըլլալը' (հմմտ. շեղարարոյ 'անհաստատ, փոփոխամիտ') և այլն:

10. Շեթ || խենթ (<\*խեթ): Առաջին «շեթ» ձևը հայտնի չէ մեզ միջնադ. կիլիկեցիաց բարբառից, ինչպես յերևում է «Վարդանա առակնիբից» («Ն'րթի բաց, յիմար և շեթ, և նա լուսթեամբ ի բուշ գնաց». § 32<sup>թ</sup>, 343)<sup>2</sup>, իսկ այժմյան բարբառներից գործ են ածում Գանձակը և Բանանցը, ուր այդ «շեթ»-ը նշանակում է 'ապուշ, հիմար' (Ամստ. 512)<sup>2</sup>, թերևս այդ արմատին է հարում և ալաշկերացոց «շիթառ» բառը հետևյալ ասույթի մեջ. «Յուշիկ քալեմ, կըսեն կամկար, շուշուտ քալեմ, կըսեն շիթառ» (Աճառ., 828, «խենթուկ կամ շտապող»), - առ վերջածանցով, ինչպես՝ կայտառ (կայթեմ, խայտամ), պայծառ (պայծ- > պէծ արմատից): Այդ հարակցութեան խոչնդոտը այն է, վոր «շեթը»-ը ունի պարզ «ե», իսկ «շիթառ»-ը յենթագրում է «էթ»- արմատը («է»ով), և բացի այդ կա վրացերեն შიტი (շաի-րի) 'розина, зевака', შიტი (շաի-րա) 'поразить, ошеломить' (Կրճ., 1527), վորից կարող էր այդ «շիթառ»ը փոխառութեան լինել: Յերկրորդ «խենթ» արմատածէր հատուկ է թե՛ գրարարին և թե՛ արդի հարավային բարբառներին (Արբ. Կյուր. Կեյվե. Մրշ. Պոլ. Որդու. Այնթ. Ադ., - տես Աճառ., 463—464): «Խենթ» բառի «ն» հնչյունը պետք է լինի նորամուծութեան, ինչպես՝ շունջ, աղանջ, ճանջ և այլոց մեջ. հմմտ. թերևս և վրաց ხეტი (խետերա) 'обезумлять' (Կրճ., 1741):

11. Շէն || -xini: Առաջինը նշանակում է 'գյուղ, շենք' և տալիս է մի շարք ածանցական բառեր (շինել, շինուած, շինութիւն...), հատուկ լինելով թե՛ գրարարին և թե՛ արդի բարբառներին. իսկ յերկրորդը (-xini) հայտնի չէ մեզ խաղաղական լեզվից՝ Արդիշտի-խինիլի, Մենուաշա-խինիլի և այլ հատուկ տեղանունների մեջ:

Հայերը այդ վերջին ՚Տ || X ձայնափոխութեանը, հավանորեն, ունեցել են և նախարկական շրջանում, ինչպես վոր այդ կարելի չէ մասամբ մի քանի գեպից յենթագրել. որինակ — a) գալառ. խուակ 'խաղողի մատի յերկու աչքերի միջոցը' (Աշար., հնացած է) և վրաց შუა (շուա) 'միջոց, կենտրոն', — b) խում (խմել) և մինդ.-լադ. suma (շումա) 'խմել' (=վր. swma id.), — c) խոնջ

<sup>1</sup> Տես Աճ., էջ 511—512, Ամստ., էջ 306:

<sup>2</sup> Տես Ամստ., 512. «Շեթը շիթ շիտեր, վանրին խաղձարար դրին (ատած)», «Բնավ խելք շունի, խաղառ շեթ է» (Լուծա, Գ. Ա. 276): Աշտարակում գործ են ածում դէշ (դ' = dh) 'շփարած և ապուշ կարած մարդ':

(‘հոգնած’) և մինգր. <sup>✓</sup>sur ‘հոգնել’<sup>1</sup>, յեթե ընդունենք, վոր՝ խոնջ : մինգ.  
 «շուր»=շունջ : մինգ. «շուրի»=ականջ : վր. kuri (մինգ. կուջի) ևլն: Հա-  
 յերենում ևս կա այդ «ր (ղ) > ջ» փոխանցումը, ինչպես ասվել է (արար.  
 մումուս — մումունջ, գրար. գող-ամ — գողղոջ-ուն ևլն):

Բայց սիրիլանտների և սպիրանտների ձայնափոխությունը չի սահ-  
 մանափակվում միայն շ || հ, շ || խ արտերնացիայով. այդ յերևույթը, կարծես  
 թե, ընդգրկել է նաև s (z) || y փոխանցումը, ինչպես կարելի յե տեսնել մա-  
 սամբ հետևյալ բառերի մեջ — սուրամ || յուրամ<sup>2</sup>, ծոյլ (? <\*դոյլ<sup>3</sup>) || յոյլ, ժո-  
 դով || յոլով ‘շատ’, ժամանակ || ամանակ (<\*յամանակ). հմմ. նաև՝ շար || յար:  
 Իսկ ավելի վաղ, թերևս, պետք լինի նիշել — յղկ-եմ || վրաց ხეղქა (սլեքա),  
 յաղթ-եմ || սեմակ. slt բայարմատը (հմմտ. արար. saluta ‘оп перевозом, взял  
 вверх’, sultan ‘мощь, сила, власть, султан, правитель’): Յեթե «զ» հնչյունը  
 նախադիր չէ, կարելի յե ավելացնել նաև — զարամուր || յարամուր ‘սաստիկ,  
 թանձր’, զիղջ (զեղջ) || խիղճ (խեղճ): Արդյոք, չէ՞ն հարում այս «սիրիլ. ||  
 սպիր.» արտերնացիային նաև — զննել ‘անտղել, рассмотреть’ || քննել,  
 սայթ-աքեմ || գայթ-եմ (>գթ-եմ) — գայթ-ակղիմ, ծործ || բուրջ, հեզ || հէզ  
 (հէք), վազ-եմ || վազ-իմ (հմմտ. վն. և Մշ. վաք ‘ջրադացի «նավ»’)<sup>4</sup>:

Համենայն դեպս, փաստ է սիրիլանտների և սպիրանտների այդ բա-  
 ռասկզրնական արտերնացիան: Յեւ յեթե վերցնենք համադրարար յերկու  
 շարքերն եւ — շոգի || հոգի, շունչ || հունչ, շողփ (որթ) || ողոք, շարաւ || հալաւ,  
 շերտ (<\*շերդ-) || հերծ (<\*հերդ-)..., շրտնում || խրտնում, շիթեմ || խիթեմ,  
 շեղ || խեղ... — սուրամ || յուրամ, ծոյլ || յոյլ, ժոդով || յոլով, շար || յար... — այն  
 ժամանակ, առյերևույթ, կարելի յե ասել, վոր առաջինները (շ, ս, ծ, ժ)  
 հարում են սիրիլանտ ճյուղի շչային (շ) խմբին, այսինքն՝ լազա-մինգրե-  
 լական, իսկ յերկրորդները (հ, խ, յ) հարում են սպիրանտ ճյուղին, վորին  
 մասամբ պատկանում է, որինակ, սվաներենը: Բայց, փաստորեն, այդ այդ-  
 պես չէ: Յերկրորդ կարգի բառերը մեծմասամբ նոր են, լիովին պատկա-  
 նում են հարեթա-հնդեվրոպական միաձույլ հայ ազգին, այսինքն՝ նախա-  
 րիական Հայաստանից չեն մոծվել, թեպետ հնչական գինամիկայի ներուժ  
 միտումները՝ սլոտենցիալ ունակությունները՝ կարող եյին և հետագայում  
 շարունակվել: Ըստ իս, մեծ դեր են խաղացել այստեղ հայ ազգի ցեղային  
 շերտավորման արտասանական || արտաբերությունները («արտիկուլացիոն-  
 բազա»-ն), վորը, թերևս, յեղել է անգլխակցելի շարունակությունը նախորդ  
 ժամանակաշրջանների: Սակայն, պատմական ստեղծագործական մոմեն-  
 տում, յերբ յերևան են յեկել՝ շոգի — հոգի, շունչ — հունչ ևլն, այդ հնչա-

<sup>1</sup> Տե՛ս I. Кипшидзе, Грам. мингр. (иверского) языка, СПб, 1914, էջ 358, Պյր = Պյլ = Պյո (շուր = շուլ = շույ), Յ-Պյր-ճեյ (վ-շուր-դըք) ‘я устаю’:

<sup>2</sup> «Յուրամ» ձևը տալիս է միայն Թումա Արծրունին (տես Ք. Պատկանյանի հրատարա-  
 կությունը, Ս.-Պետերբ. 1887, էջ 110):

<sup>3</sup> Արդյոք, արմատակից չէ՞ «ծոյլ»-ին վրաց ზარ-ემა (զար-երա) ‘ծուլանալ’ (Կոծ, 513):

<sup>4</sup> Վրաց ჯარბი (շարբի) ‘змея аспид’ (Կոծ., 1766) և հայոց նույնիմաստ «քարբ»-ը  
 նույն «ջ || ք» արտերնացիան են տալիս:

կան փոխանցումը յեղել և դուռ փաստական մի գրություն, թերևս առանց նշանակողական տարբերությունների. հետագայում միայն այդ հնչական տարբերակները, նայած վոճին և ժամանակին, առաջ են բերել նշանակողական վորոշ տարբերացում հոմանշություններ:

Այս հնչական > նշանակողական (բառաստեղծական) միտումը, կարելի չե ասել, հանուր հարեթական և, ուր մասնավորապես արմատի վորոշ բաղաձայնների ալտերնացիայի շնորհիվ առաջ են գալիս նորանոր հոմանշություններ, նրբություններ և այլն: Հմմտ., որինակ, սոնանա հնչյունների այգպիսի դերը բառավերջում, ինչպես վրացերենում փրւ || փրն || փքր... տարբերակները ('աղալ'), կամ խսն || խսլ || խսւ տարբերակաները ('հիշել') ևլն ևլն<sup>1</sup>:

Մեր նիշած ալտերնացիան՝ բառասկզբի սիրիլանտների և սպիրանտների մեջ՝ մի մասնավոր յերևույթ և այդ ընդհանուր հարեթական հնչադինամիկայի հանդեպ: Յեւ վորքան վոր այդ յերևույթը այժմս չի գիտակցվում և պատմական վաղեմի շրջանների ստեղծագործությունն և, այնչափ ել մեզ համար նա հնեարանական և: Բայց կարճից ենք ասել, վոր նրա սլոտենցիալ ունակություններն իսպառ մեռած են և չքացել են այժմյան ստեղծագործական բովից: Ըստ իս, այդ դեռ վաղաժամ և, վորովհետև յեթե մի շոգի || հոգի, շունչ || հունչ ևլն պատմականին և պատկանում, վոչ մի յերաշխիք չունենք, վոր նման ուղղությամբ ընթանալով, մի վանեցոց խինձ (< հինձ) և արար. սինձ—կամ դարար. հուլ անել և արար. ծուլ անել 'շպրտել դեպի վեր'—կամ արար. տրմկել > տրմրսկվել (<\* տրմրկկել)<sup>2</sup>, լըխկել > լըշկել<sup>2</sup> և այլն ապագայում չեն առաջ բերիլ նաև նշանակողական դիֆֆերենցիացիա: Փաստական հնչական տարբերացումը ստեղծվում և, նա ունի նման նախորդ տեսակները՝ նախադեպերը, իրենց ուրույն զարգացմամբ: Բայց հնչական այս մասնակի ընթացքը և յուր արժեքը մեզ կարող են ամբողջապես պատկերանալ, յեթե վերցնենք այդ հնչադինամիկական ավելի մեծ ժամանակաշրջանում, ավելի մեծ տեղությամբ: Պատմական հնչափոխական մի յերևույթ կա, և նրա, այսպես ասած, շորշոփները կարող ենք դրալ և այժմս: Իսկ այդ նախնականը չունե՞ր նման հնչաբանական յերեվույթներ նախապատմականում: Ամբողջական ըմբռնման տեսակետից կարևոր ենք համարում հետախուզումներ տալ և այդ առաջին շրջանից: Մեր նիշած հնչաբանական միտումի նախնական հողը, նրա շարժիչ ֆերմենտները պի-

<sup>1</sup> Այդպես են վրաց—փրւա 'молоть', փիվ-իերի 'рыхлый',—փխունա, փշխունա (շխ < խխ < խ) 'крошить',—փշխալուլի 'рыхлый, рассыпчатый' և այլն: Հմմտ. մի նման դեպք գրարարում՝ պչրեմ || պճնեմ 'напряжаться': Իսկ ձայնավորների տեսակետից հմմտ. հայերենում—kotr || ktor || ktur || kutr || kotor—կամ xotor || xtir—կամ փուխր || փշուր ևլն:

<sup>2</sup> Գրաբարի «տամուկ» (=խոնավ, թաց) բնից առաջ և գալիս տրմրկ-ել (> տրմկել), հետո՝ տրմրկկ-ել > տրմրսկ-վ-ել, իսկ գրաբարի լիլմ > արար. լիկել > լշկել, նույն կկ > խկ > ցկ փոխանցումով: Կա նաև ք > քք > քք, ինչպես արար. չրմքել (< ցմքել) 'հյութագերծ լինել' և չմշկել (< չմշքել)-իմ: Թերևս այդպես և նաև «խկ» < \*իկ-կ=գերմ. eig-en: Մյուս սաստկացած բաղաձայնները (consonne geminée) մնում են անփոփոխ—ամմեքը, լողպող, շեպպել, վազպել... վրացերենում—xx > քx, քk > քk (c k), ce > se...

տի փնտրել նախարիական Հայաստանում և նրա հարեթականներից մնացած ժառանգության մեջ: Այդ լեզվական ժառանգությունը վկայում է, Վոր հայկական լեզուների մեջ կա մի հարեթական շերտ, վորը հարում է սպիրանտ ճյուղին, ինչպես սվաներենը ևս: Ունինք վորոշ թվով բառեր, ուր վրացական ց (չ) հնչյունի փոխարեն մենք հայերենում տեսնում ենք լխ», կամ վրացական ծ (ճ) հնչյունների դիմաց՝ հայերեն «կ»: Այս վերջին յերկ- լեզվյան յերևույթը և մեր նիշած դուտ հայերենը (սիր. || սպիր.) իրարից անջատ չեն կարող ուսումնասիրվել. և մենք կարևոր ենք համարում ընդ- հանուր պատկերը լրացնելու համար բերել նաև այդ վրացա-հայկական հըն- չափոխական բառամթերքը՝ բառասկզբի վրաց ց (յ) — հայ. խ, վրաց ծ (ն) — հայ. կ որենքի համար:

Վրաց Յ («ց») || հայ. «խ»

1. Վրաց Յժա (ցբա) ‘лукавство’ Յժ-ոյրո (ցբ-իերի) ‘лукавый’ (Վյժ., 1588), վորոնցից նոր ձևեր — Յժյնա (ցբունա)<sup>1</sup> ‘соблазнил’, Յժոլո (ցբլիլ) ‘ложь, заблуждение’ և այլն: Հմմտ. հայոց խար-եմ բայարմատը:

2. Վր. Յլա (ցլա) ‘отделять, снимать, сдирать’ (ներկան՝ վացլի, վացա- լի. Վյժ., 1596): Հմմտ. խիլ — խլ-եմ:

3. Վր. Յոժա (ցորա) ‘затыкать себе напр. уши’ (Վյժ., 1598): Հմմտ. արար. խուլի (<խոլը) ‘կաթսայի կափարիչ’, խուլի անել ‘գոցել’ (Վն. Ղզխ. Ղրբ., տես Աձ., 490):

4. Վր. Յոնցլո (ցինգլի) ‘сопля жидкая’ (Վյժ., 1594), վորից, հավանո- րեն, առաջացել է նաև ճոնցլո (ձվինալի) ‘сопля’ նոր ձևը «վ» հնչյունի ներմուծումով, վոր շատ սովորական է վրացերենում: Յեթե ընդունենք նախնական հին ձև «ցինլի», այն ժամանակ հայոց՝ խլինը (սեռ. խլանց), խլինիք բառը յուր xlin (<xilin) արմատով կլինի ճիշտ դրա համարժեքը. հմմտ. նաև գավառական՝ խլնոտ ‘сопливый’ (Սոտորջ.) = խնլոտ (կարին) = խլլոտ (Արբ. ևլն, տես Աձ., 471):

5. Վր. Յոժի (ցոժի) ‘тесто; закваска’ (Վյժ., 1599): Հմմտ. խմոր բառը (-ոյ ածանցով), թեպետ սեմականում ևս հայերինն ալիլի մոտ ձևեր կան — ասոր. xamira, վորից արար. xamir (ըստ Hübschmann-ի), հայերեն «խմոր»-ի փոխառությունը այդ գիտնականը հարցական է համարում, վորովհետև այդ դեպքում հայերենը պիտի լիներ «խմիր» կամ «խա- միր», բայց վոչ «խմոր» (տես Arm. Gr., 305): Արդյոք, չի՞ կատարվել հակառակ հոսանքը՝ հայերից ասորիներին և դրանցից արաբներին, սեմա- կանին բնական՝ o > i փոխանցումով:

Հայերենում կա — խեղ, խեթ՝ շիլ, ծուռ նայվածքով (= խեթաղէմ), խէթ (սեռ. խեթի, խիթի) ‘արդելք, գայթակղություն, խուր նայվածք’ (ըստ Առ. բառ.): Յեթե ընդունենք, վոր այդ ձևը և նշանակությունը չեն ածանցվել «խայթ > խէթ > խիթեմ > խթեմ» արմատից, այլ ուրույն են

<sup>1</sup> Վրացերենում -un կամ -en ածանցներով ներգործական բայեր են շինվում, ինչպես ցբա — ցբունա, ցղա — ցղենա, դգոմա ‘կանգնել’ — դգենա ‘կանգնեցնել, դնել’, վլա ‘գնալ’ — աղ- վլենա ‘համբառնալ, вoссылать, возносить’:

‘*փորձ, փորձանք*’ նախնական նշանակությամբ, այն ժամանակ դրա հետ կարելի չե կապակցել վրաց ՅԼԹ (ցղա) ‘*попытка, старание*’, վսցեղի—վոցաղե ‘*испытывать, пробовать: искушать*’ (վորից «ցղենա» կամ «ցթենա» ‘գայթակղել’, «ցղոմա» կամ «ցթոմա» ‘սխալվել’ ելն):

Վրացյորհնում կա մի յերկու դեպք, յերբ հին բառասկզբնական «խ» հնչյունը դառնում է «ց», ինչպես—*ձեռլո* (մ-խոլո) ‘*единый, один только*’ [ձեռլո խոլո ‘միայն, բայց’] և *ՅԼԹ* (ցալի) ‘*один: один экземпляр*—կամ *quedna* ‘*холостил, скопил (=արար. خادم ‘евнух, նվազական خورم)* և *ՅՅԵԼԹԵԾԻ* (ցուեղանի) ‘*мужчина неспособный к деторождению*’ (տես Н. Марр, Осн. Табл., էջ 9):

Վր. Մ («ծ») || հայ. «Կ» (<հին Կ-ից)

1. Վր. ՄՅԵԹԻ (ծվեթի) ‘*капля*’, ՅՅԵԹԻ Վ-ս-ծթ-ի) ‘*капаю*’: Հմմտ. կաթ, կաթ-իլ. ստուգարանությունը Մառինն և (ՌՖ. Կ Ե ՅԶ. Армении):

2. Վր. ՄՅՐՏԹԱ (ծւրթա) կամ ՄՅԱՐՏԹԱ (ծվարթա) ‘*наставлять, научить, упражнять, приучать...*’ (ներկաները վածվրթի, վածվարթե), վորոնցից ՄՅՐՏԹԵԾԱ (ծւրթնա), ՄՅՐՏՅԱ (ծւրթվա)-*id.* (Կյճ., 1675): Հմմտ. կիրթ—կրրթ-իմ. ստուգարանությունը Մառինն և (*ibid.*):

3. Վր. ՄՅԱ (ծնա) ‘*вплетать*’ (ներկան՝ վածի, վածան), վորից ՄՅՅԱ (ծնվա) ‘*плести*’ (ներկան՝ վածնավ), ՄՅՅԵԼԻ (ծնուլի) ‘*плетенный*’, ՄՅՅԵԼԻ (ծնելի) ‘*прут*’ (Կյճ., 1691): Վրացական այդ «ծն-», «ծան-» արմատը, ըստ իս, նույնն է, ինչ վոր մեր գավառական «կան-» արմատը ‘*ուրել*’ նշանակությամբ. հմմտ. կանել (Սոյ. Մրդ. Վան) ‘*գերձան՝ թել՝ չվան ուրել*’, մուկաց մոտ ‘*շուռ տալ, դարձնել*’ (Աճ., 791): Այդ բառը, ինչպես Ամատունին և նիշել, գործ է ածվել նաև Առաքել Դավրիժեցու կողմից (Ամատ., 328)<sup>1</sup>:

4. Վր. ՄԵԼԹԱ (ծալա) ‘*материя из ран*’ (=‘վերքի միջի հեղուկային նյութը’, ինչպես *ցույց* և տալիս դրա բացատրությունը հորձի «չիրքի» ‘*трязь, нечистота; гной, материя из ран*’, տես Կյճ., էջք 1632, 1579): Հմմտ. գրարարի կեղ ‘*խոց. ուռեցք. տաճկ.*’ չրպան, ևարա’ (ԱԲ), վորը գծվար թե հնդեվրոպական ծագումով լինի, ինչպես վոր կարծվում է (Hübsch., Arm Gram., էջ 459):

5. Վր. ՄՅԵԾԱ (ծերա) ‘*склеивать*’, ՄՅԵԾՈ (ծերո) ‘*клей*’: Հմմտ. արդի բարբառների՝ կիպ—կրպ-իլ, կրպ-չ-իլ ‘*փակչել, прилипнуть*’ (Արբ., Բալու, Սոյ, Խիզան, Մրշ, Պլ., Վն և այլն, տես Աճ., էջ 610): Արևելյան Անատոլիի թուրքերի *kip* ‘*նեղ, միացած*’, *kiplasmaq* ‘*իրարու գպչիլ, հարիլ, լավ միանալ, կպիլ*’ (Աճ., *ibid.*), մեր կարծիքով, կամ հայերենից և վերցրած կամ անկախ ձև է, իսկ հին ու նոր հայոց «ծեփեմ» բայը, հավանորեն, վրացերենից է:

6. Վր. ՄՅԵՐՏԹԱ (ծերտա) ‘*колоть*’, ՄՅԵՐՏԻԼԻ (ծերտիլի) ‘*укол, точка*’: Մառը դրա հետ համեմատում է «կէտ» բառը («ՌՖ. Կ Ե ՅԶ. Арм.»), վորին

<sup>1</sup> «Զպարանս կանթեղին... արկին ի վրտիս արեղայիցն... և սկան կանել [ուրել] զփայտն, և ի կանել փայտին՝ պարանն ևս ուրեհալ և մանեհալ եղև»: Տես Առաք. վ. Դավր., Վաղարշ, 1884 լլ, 387:

պիտի միացնել, ըստ իս, նաև դավառ. կրրտ-ել 'նշանի կամ մի կեսի խփել' (Բաղեշում՝ ըստ ԱՃ., 628, նաև Աշտարակում):

7. Վր. Թ-ՊՅՅԾԵ (մ-ծվանե) 'зеленый', վորից մեզբելական փոխառ- նությունն և Կ-ՊՅՅԾԵ (ը-ծվանե)-id.: Հմմտ. կան-աչ:

Արդ, ի՞նչ յեզրակացության ենք գալիս:

Նախ, վոր հայերենի մեջ գոյակից են նույնարմատ յերկու շարք բա- ռեր, ինչպես—շոգի || հոգի, շունչ || հունչ, շողոք(որթ) || ողորք., շրտնում || խրտնում, շիթեմ || խիթեմ, շեթ || խենթ., սուրամ || յուրամ, ծոյլ || յոյլ, ժողով || յոլով.:

Յերկրորդ. այդ հնչական դիֆֆերենցիացիան, առաջանալով զուտ հայկական հոգի վրա, կատարել և ընդհանրապես նշանակողական դեր, ինչպես վոր այդ հատուկ և հարեթական կովկասյան լեզուներին, այն ել ավելի լայն չափով (հմմտ., որինակ, սոնանտների ալտերնացիան, մաս- նավորապես բառավերջում):

Յերրորդ. հնչական այդ դիֆֆերենցիան, իբրեւ իրեն զարգացման դրդապատճառ, հավանորեն ունեցել և հայկական տարբեր բարբառների կամ բարբառախմբերի արտաբերական հողը՝ հնչական բազան: (մեկը հյու- սիսային -- ուրարտակա՞ն, մյուսը՝ հարաւային-խալդակա՞ն):

Չորրորդ. հնչափոխական «հայկական» այդ պրակտիկան արտացոլել և նախորդ՝ Հայաստանի անչրածինների՝ լեզուների հնչական միտումները, ինչպես կարելի յե տեսնել վերեվում բերված որինակներից՝ հայ-վրացական համեմատական հնչաբանությունից, վորով ապացուցվում և հայ լեզվի հա- բեթական շերտի նայել «սպիրանտ» նյութին պատկանելը:

IV. r || y և r || n ԱԼՏԵՐՆԱՅԻԱՆ ՅԵՐԿԻՄԱՐԲԱՌԻ ՄԵՉ

Հայերենում մնացել են մի շարք հարեթական բառեր, վորոնք անշուշտ արտացոլում են այն ընդհանուր հարեթական «բառաստեղծ միտումը», վո- ռը մասնավորապես կատարվել և սոնանտ (y, w, r, l, m, n) հնչյունների ալտերնացիայի միջոցով, յերբ արմատը այդպիսի տարբերացումով առաջ և բերում նաև նշանակողական փոխանցումներ՝ նրբություններ (տես վերը):

Հայերենում, այս դեպքում, սոնանտների այդպիսի փոխանցումը կա- տարվել և բառամիջում, իբրև յերկրարբառի յերկրորդ տարր, ընդունելով, վոր «ձայնավոր (a, e, o, ə) + սոնանտ (y, w, r...) + բաղաձայն» դրությունն և իս- կական յերկրարբառը: Որինակ, յեթե յեղել և դիցուք թե մի kart արմատ, դա կարող եր տարբերացման յենթարկվել և առաջացնել kayt, kawt, kalt, kant և kamt նորանոր ձևեր, այլևայլ նրբություններով: Հայերենում պատմական որինակները, դժբախտաբար, այնքան ել շատ չեն, իսկ սո- նանտների ճոխ դրսեվորման տեսակետից՝ ավելի սահմանափակ: Գլխավո- րապես գործելիս և յեղել r || y, r || n ալտերնացիան, իսկ մի դեպքում r || n || y:

Բերենք յեղած «պատմանյութերը»:



1. Պարտ 'ДОЛГ' և պէտ (< պէյտ) 'պիտույք, должное' — part || peyt (<\*payt?) ալտերնացիայով:

2. Պարշ 'գարշելի, ПРОТИВНЫЙ' և գէշ (< գէյշ) 'վատ, հոռի, տգեղ' — garš || geys (<\* gays?) ալտերնացիայով<sup>1</sup>:

3. Պարծ 'պարծանք' գառնում և «ծ» հնչյունի ղեզաստիբիլացիայով part, վորը տալիս են — «հ-պարտ» 'շատ պարծենկոտ' բառը (հ- ածանցի համար հմմտ. հ-լու, հ-գօր, հ-մուտ...) և «ամ-պարտ-տւան» 'հպարտ, վսեմ, փառավոր' (aus am-part-a-van, vgl. hpart 'hochmütig', տես ArmGr., 178)<sup>2</sup>: Իսկ «ծ» և «ճ» փոխանակումով այդ «պարծ»-ը գառնում և «պերն» (?<\*պարճ), վորը Մառը թարգմանում և 'блестящий, славный, великодушный' (տես նրա Яф. происх. арм. margarey, СИБ, 1909 ИИАК, էջ 1155) կամ ըստ ԱռԲառ. 'բարձր ու պանծալի, փառացի, անվանի, մեծ, աղեկին աղեկը, զարդարուն': Այդ «պարծ» արմատը ալտերնացիայի տալիս, ինչպես ճիշտ դիտել և Մառը (ibid.), պայծ 'պեծ, некра բառի հետ, վորը գոյություն ունի թե բարբառներում (պէծ, պէծալձալ, պէծին տալ, պէծիկ...) և թե գրաբարում՝ պայծառ բառի մեջ (-առ ածանցի համար հմմտ. գրաբ. կայտառ 'резвый', ալաշ. շիթառ... տես էջ 12): «Պարծ» սկզբնականը փոխանակվում և նաև պանծ-ի հետ, վորի մասին վկայում են — պանծամ 'իր վրա հույս դնել, մեծ համարում ցուցնել, պարծենալ', պանծալի 'պարծանքի արժանի...' (ԱռԲ., 679): Հետևապես առաջանում են յերեք տարբերակներ — պարծ (պերն) || պայծ || պանծ: Բուն արմատը (pare) զուտ հարեթական և և դժվար թե հայերենում փոխառնված լինի «քարթո-մեսխիական» խմբակից, ինչպես Մառն և գտնում (ibid.): Հմմտ. վրաց. ძრკიალი (բրկիալի) = ძრკიალი (պրկիալի)

<sup>1</sup> 'վատ, հոռի' նշանակութիւնը ունին Ախալք., Ակն, Զեյթուն, Խոտորջուր, Խարբ., Կեյվե, Կեսաբիա, իսկ 'տգեղ' նշանակութիւնը՝ Երև. Ղզխ. Ղրբ. Նորբ. Վան. Տրապ (տես Աճ., 227):

Մենք չենք կարծում, վոր այդ 'վատ — տգեղ' նշանակութիւնը սերված լինի գէշ 'ղի, մեռելոտի' նշանակութիւնից: Ինչպես վոր առաջին «գարշ || գէշ» տարբերակներն իրենց բնականոն ar || ey (<\*ay?) ալտերնացիայով մենք համարում ենք Հայաստանի անդրաժինների բառ, այնքան ել տվյալ կա սնդելու, վոր յերկրորդ գէշ ('մեռելոտի') բառը հարեթական չէ: Վերջինս կամ իրանական փոխառութիւն և հայերի կողմից վորոշ հայացումով՝ հնչարանական տեսակետից (իրանական սկզբնական v > հայ. գ, տես իմ О происхождении др.—арм. amehi, СПБ, 1916, էջ 6) կամ զուտ հնդեվրոպական բառ և, համարժեքն ունենալով ավեստական v a ē s̄ a h 'Moder. Verwesung; Ort der Verwesung' (=гниль, место гниения), հին վերին գերմ. wesanen 'ГНИТЬ', հյուս. վերին գերմ. verwesen 'ГНИТЬ, ТЛЕТЬ' (տես Bartholomae, AltirWort., էջ 1329): Հայ-իրանական փոխհարաբերության տեսակետից (այդ s̄ = հայ. շ նկատմամբ) մենք կմասնանշենք նաև — արարատյան **hacani** անել (=ցորենը ցրել՝ փռել կալի մեջ) և նոր պարսկ. پاشیدن pasidan 'spargere, diffundere', կամ գրաբարի՝ **բաււնիմ** 'թողումելու պես թուլանալ' և ավեստ. taos բայարմատը (=leer, los sein, տես AirWb, 624): Իսկ հայոց «շ»-ի հնդեվրոպականութիւնը ղեռ պարզված չէ (? < հնդեվր. \*sy), հմմտ. աշուն (осень, գոթակ. asans..), գիշեր 'вечер, vesper.', էշ ասուս, asinus, Esel.:

<sup>2</sup> Ամ-նախածանցը յեղել և առաջ համ-և զուտ հայկական և, հմմտ. համբառնամ || ամբառնում, հանդիպիմ (<\* համ-դիպիմ)... Հայերենում կա և իրանական համ-'всe-,одно-', ինչպես՝ համաշխարհային, համագիւղացի... -van ածանցը ունին և վրացիք, որինակ ջემო (գեմո) 'համ' և գեմովանի 'համեղ':

‘блестание, сияние, сверкание’, իսկ կк կամ եկ սաստկացումով առաջ են գալիս նաև ծրֆյոնա (բրժկ․ինա) ‘блестал, сиял, сверкал’ (կ․կ > ծկ․) կամ թե ծրֆյոնալո (բրժկ․իալի) ‘блестание, сияние, сверкание (ibid.): Այդ արժատը Մառը համեմատում է սեմակ. bṛk նույնիմաստ արմատի հետ (որինակ, արար. برق ‘блестал, сверкал’, برق ‘МОЛНИЯ’, կա նաև ասորականում և հեբրայերենում) և վերջին հաշվով համեմատում է «մարգ-արէ» բառի արմատի հետ (իրբ marg- ‘звезда’ յեվ «մարգարէ»ն ‘звездочет’) 1:

4. Կարծ-եմ բայի «կարծ»-(‘կարծիք’) արժատը, ըստ իս, նշանակել է հնում մոտավորապես ինչպես ուսաց ‘проблеск’-ը և յուր տարրերակն ունի կայծ (‘искра’) բառի մեջ, վորից՝ կայծակն ևլն: Ըստ Մառի իմաստաբանական պալեոնտոլոգիայի<sup>2</sup> «աստղ» գաղափարը ծագեցրել է նաև «լույս — կայծ — միտք — արդարություն» գաղափարների շարանը:

5. Խորշ-իմ՝ յետ քաշվել, խպնել: Հմմտ, խոյս — խուս-ափ-եմ, սկզբնական xors || xoys ձևերով:

6. Խորթ ‘կոշտ, անհարթ’, խորտարորտ՝ խորդուրորտ, դարուփոս (ԱՌԲ., 390) = արդի արարատ. «խորդուրորտ» (Ամատ., 288)<sup>3</sup>: Հմմտ. խոյթ (=խիթ) ‘ժայռ, ծովի մեջ քար՝ նաև խուլթ ‘խոչընդոտ, քար գայթակղության . . .’, խուլթ-ք ‘ժայռ, ջրի մեջ ցցված քար’ (ԱՌԲ., 385, 378, 393). սրանց պիտի ավելացնել դարարադցոց խուլթ ‘հարթ գետնի մը վրա բարձրացած բլուր (ԱՌԲ., 488) և, հավանորեն, գրար. «ան-քոյթ ‘անվտանգ, ասպահով’, վորը իսկապես նշանակել է ‘անխոյթ, անխոչընդոտ’ (նավահանգիստ): «Խորթ || խոյթ» արմատի բուն նշանակությունն է ‘ցցված քար (ծովում), հողի կոշտ (գետնի վրա)»:

7. Գավառական՝ կրտել ‘նշանի խփել, попасть в цель’<sup>4</sup>, յեթե միջի «ր» հնչյունը նոր հավելում չի մի ինչվոր \*կտել նախնականից (ինչպես՝ բրթել < րթել, խրթել < խթել և այլն), այն ժամանակ kert- (kirt-) արժատը հավանական փոխանցումն է տալիս գրար. կէտ (< կեյտ) բառի հետ, վորին

<sup>1</sup> Արդյոք, մեր «մարգարէ» բառը այնպիսի կազմություն չունի, ինչպես, որինակ, վրաց. Ձ-ըոն-սոյ (մ-դին-արե) ‘текущий; река’ (․դին-երա» ‘հոսել’ բայից), — Ձ-ըյոն-սոյ (մ-դեր-արե) ‘лежащий’ («դերա» ‘պառկել’ բայից), — Ձ-ըյոլ-սոյ (մ-դուդ-արե) ‘кипящий’ («դուդ-երա» ‘յեռալ, кипеть’ բայից) ևլն: Վրացական այդ -are վերջածանցը և m- նախ դիրը, զրվելով բայերի վրա, կազմում են գործող անձանց անունները (nomina agentis) յեվ, հավանորեն, մեր «մարգարէ» բառն էլ նման կազմություն ունենա (m-margare) մի «մարգ» չմնացած բայից, վոր նշանակած պիտի լինի ‘գուշակել’ և հետևապես \*մ-մարգ-արէ = ‘գուշակող’: Իսկ \*marg- ‘գուշակել’ բայարմատը կարող էր մի գոյականից ստանալ այդ յուր նշանակությունը, և հավանական է, վոր այդ սկզբնական գոյականը (\*marg-) նշանակել է ‘աստղ’, ինչպես Մառն է դիտում:

<sup>2</sup> Տես իմ «Հարեթական լեզվաբանությունն ու տեսությունը», 1926, էջ 15,

<sup>3</sup> Արդյոք, կապ չունի այդ «խորթ-ի հետ, իբրև ածանցյալ ձև, «խրթին» բառը (=մուլթ, դժվարիմանալի), այսինքն՝ խորթուրորթ հատկություններով:

<sup>4</sup> Ըստ Աճառյանի բառգրքի (էջ 626) այդ կրտել բայը ‘նշանի խփել’ իմաստով գործ են ածում Բաղեշում, Ղարաբաղում: Արարատյան բարբառում (որինակ, Աշտարակում) կրտել (կրտակ) բայը յերեք նշանակություն ունի—ա) նշանի խփել, б) մալել, ХОЛОСТИТЬ, с) զինին դտելու համար տեղափոխել մի աճանից մյուսը (ինչպես, տակառից՝ տակառ, կարասից՝ կարաս):

հարում ե, ինչպես նշվեց, վրաց. წეობა (ձերտա) 'КОЛОТЬ', წეობილი (ձեր-  
տիլի) 'УКОЛ, ТОЧКА' և այլն:

8. Աղարտեմ 'վար գարնել, քամահրել, ավրել, քանդել, փչացնել'  
(ԱռԲ.): Հմմտ. թերևս—աղէտ 'ցավ, կսկիծ, փորձանք': Այդ alert || aleyt  
փոխանցումը ունի նաև հետևյալ զուգահեռը—կապարձ 'նետ դնելու աման'  
և կապին 'աման մը, չափ մը, շինիկ' (կապիճք աչաց 'աչքին տեղը' ծակը,  
կապիճք կօշկաց 'կոշկին յերեսը ինչվան ծունկը. տաճկ. դոնճ'):

Կա մի դեպք, ուր տեսնում ենք  $y \parallel r$  փոխանցումը, ինչպես այդ ցույց  
ե տալիս դարձար. և դազախեցոց խարտ 'կարիճի, մեղուի, կրետի . . . խայ-  
թոց' նաև 'խայթիչ' (Աճ., 456). 'վորից' խարտահարել (Ղրբ.) 'կծու վիրա-  
վորել' (ibid): Մենք չենք կասկածում, վոր այդ «խարտ»-ը (<\*խարթ)  
առաջացել է «խայթ» ընդհանուր արմատից: Ճիշտ է, կա մի քանի նման  
դեպքեր ևս, յերբ մասնավորապես գրաբարի -այթեմ վերջավորող բա-  
յերի դիմաց (մեծմասամբ բնաձայնական կազմությամբ են) մենք գտնում  
ենք բարբառներում—ըրթել (-որթ-), ինչպես—պայթեմ (-թիմ) և մշեցոց,  
խարբերոց ու այլոց պոռթկալ, —նայթեմ 'ճաթել ձայն հանելով, կայթել,  
ցաթքլտել' և արար. նռթկալ, —ցայտեմ || ցայթեմ 'ցաթկել (ջրի, արյան),  
լույսը ցաթել, ծագել' և գավառական ցրդել || ցռթել || ցռթկել<sup>1</sup> 'հեղուկ վի-  
ժել, ИСТОРАТЬ, ցնկնել': Սակայն ավելի հավանական է այստեղ տեսնել  
ր (ռ) հնչյունի առաջանալը այդ պայթեմ—ճայթեմ—ցայթեմ արմատների  
մեջ, յերբ արդեն դրանք պատմականորեն դարձած են յեղել \*պթել \*ճթել  
և \*ցթել, ինչպես՝ գոյթ > գթամ, գայթեմ > գթեմ, խայթեմ > խթեմ. և յերկու-  
րտաձայնների մեջ (պթ-, ճթ-, ցթ-) բարբառներում ընդհանրապես մտնում  
է ր(ռ), իբրև վանկարար մի հնչյուն, նման—րթեմ (Ջաքար. սարկ.) 'հրել'  
և արարատ. բրթել, —գավառ. պհկել և պրնկել, —խթել 'ուտել' և խրթել,  
—պնեղ և վրաց. ბრჯალი (բրձալի) 'ПЯТА' ևլն ևլն:

Ուշագրավ է այդ  $y \parallel r$  փոխանցման տեսակետից, վոր վրացիք ևս  
խուսափելով ընդհանրապես  $y$  (յոտա) հնչյունից, թե բառակզրում և թե  
մեջն ու վերջը, վորոշ հայկական փոխառնություններ վերարտադրել են  
ր(լ) հնչյուններով, փոխանակ յ, ինչպես, որինակ, კოლბი (կոլտի) 'табун,  
стадо', վոր գործ է անվել Աստվածաշնչի և Ավետարանի հին թարգմանու-  
թյան մեջ, իբրև 'խոզերի, յեղների և ուխտերի խումբ', վերցրած է հայոց  
'կոյտ' բառից, վորը նույն հին հայոց թարգմանության մեջ («Գիրք Մնա-  
ցորդաց»-ում, հրատ. Գ Սալաթյանի, Մոսկվա, 1899) նշանակում է նույ-  
նը—'կոյտ' = ձիերի երամակ («Եւ էին Սողոմոնի քառասուն Ռ. մատակ ձի  
կոլտի», տես Ամատ., էջ 359): Դժվարանում ենք ասել, թե ինչ փոխհարա-  
բերություն կա այդ կողմից (փոխառական թե անկախ) — հայերեն կէս և  
վրաց. კობი (կերձի) 'доля, часть, порция' բառերի մեջ, — կամ խայտամ  
'թովալ' և վրաց. ხლები (խլտոմա) 'прыгать, скакать', — սայթ-աքեմ և  
մինգ. ზიგტ-უა 'скользнуть, спотыкаться' (Кипш., էջ 236):

<sup>1</sup> Ըստ Ամատունու—ցրդել գործ են անում Բուխն., Ապար., Մուշ, Շիրակ (էջ 645),  
իսկ ցրթել՝ արարատյանում: Պոռթկալ՝ ըստ Աճառ. (922) գործ են անում Պարբ., Մուշ,  
Պոլիս և Աղաբասար, պոռթկիլ՝ վանում, պոռթնալ՝ Արարկիրում (ibid.):

Մեզ համար միանգամայն ակնահայտնի յե ր || ց սոնանտական փոխանցումը հոյոց յերկրարբառի մեջ, ինչպես— պարտ || պէտ, գարշ || գէշ, աղարտ || աղէտ, պարծ || պայծ, կարծ- || կայծ, խորթ || խոյթ . . , յերբ սկզբնական հնչափոխական յերեւոյթը, իբրեւ փաստ, առաջ ե բերում նայել նշանակողական տարբերացում: Նույնը տեսնում ենք նաև ր || ռ ալտերնացիայի մեջ, ինչպես են—

1. Թարց ‘առանց, без’=թանց (գրաբարի նախադրություններ են):
2. Իարծր=արար. բանցր. յիթե չի դործել նաև (-րծր-) յերկու «ր» հնչյունների դիսսիմիլացիայի որենքը:
3. Կիրճ ‘ущелье’=կրնճ-իո ‘խորշոմ’ (<\*կինճ-իո). իմաստարանական տեսակետից համատ. «խորշ» և «խորշոմ»: Այդ «կիրճ- || կինճ-» ալտերնացիային են հարում նույնարմատ (կ || խ)՝ խինժ=խինժ=արար. խինջ ‘կամավ հավաքած յերեսի խորշոմ, կինճիո. նաև խեթ նայվածք’ (Ամատ., 279):
4. Կործ-եմ ‘ամանը գլխիվար դարձնել, բոլորը դատարկել’ (արարատ. կործանել -id.): Համատ. արդի արար. գլխկոնձի տալ ‘кувырнуть’ կունդկի տալ -id., կոնձել ‘բաժակը շրջելով գինին դատարկել’ այստեղ կոնձ համապատասխան ե հին կոնժ-, իսկ կունդ(-կի) <կոնդ- ստացվել ե սովորական ձ>դ դիսսիմիլացիայով. — համատ. լոձ (դեղձ) > լոդ, դեղին <\*ձեղին (ЖЕЛ-ТЫЙ): Կործ-ը հավանորեն ծագած լինի «կոր» սկզբնարմատից «ծ»-ի հավելումով (համատ. գրաբարում՝ կոր ի գլուխ ‘գլխիկոր’, ի կոր ‘դեպի վար, գլխակոր’):

5. Չորձ ‘շոր, լաթ, հագուստ, գգնստ, վրայի լաթը, լաթի կտոր, քուրջ’: Համատ. ծունձ ‘քուրջ, շոր’, վորը անցել ե, ըստ լա, վրացերենին՝ ժոճո (ձոնձի) ‘старое платье, ветошь; тряпка’: Արդի ցնցոտի բառը առաջացել ե այդ ծունձ ձևից գավառական (ձ > ց) հնչափոխությամբ (ձունձ > ձունց > ցունց):

6. Կորդ ‘չբանեցուցած, վարուցան չեղած, կոշտ, չոր, պինդ’: Համատ. կունձն կամ կունժն ‘կունժ, կնժունք, գուղձ, հողի կոշտ կտոր, կամ խոտովը’ (=արար. կունձդ), գուղձ-(ն) ‘հողի կոշտ, մեկ բուռ հող: Ունենք, հետևապես, ր || ն || դ ալտերնացիան: Վրացիք հին ժամանակ գործ են ածել յորձո (կորդի) ‘ЛУГ’ Աստվածաշնչի մեջ, Ռուսթավելու մոտ . . (տես ԿԿԾ., 424), բայց կա և յորձոն թոճայցոտ (կորդիս մոնակվեթի) ‘дерн’ վորը համապատասխան ե հայոց կունձ բառի նշանակությանը (մոնակվեթի ‘отрезанный, отрезок’ հին բառ ե, — ԿԿԾ., եջ 824), այսինքն «կորդիս մոնակվեթի»=կորդի կտոր. կունձ: Կա և փոխառնված յորձո (կոշտի) ‘твердое тело’ (ԿԿԾ., 626), ուր «կոշտ < կորդ»:

Այսպիսով, ուրեմն, որինակները ցույց են տալիս, վոր կատարվել ե հնչափոխական ալտերնացիա յերկրարբառային «Կ» սոնանտի՝ յել «Կ», «Ո» սոնանտների միջեւ (ր || ց, ր || ռ . . )<sup>1</sup>: Անշուշտ, այդ հանդիսանում ե իբրև

<sup>1</sup> Մենք անտես ենք անում «Կ» յերկրարբառայինի անհետանալը, ինչպես արդի բարբառներում ե — քարշել > քաշել, երթամ > եթալ, արջառ > աշառ, դուրս > դուս և այլն. նմանապես թողնում ենք դրա վերածվելը «շ» հնչյունի — կորդ > կոշտ, շերտ > շեշտ . . արդի գավառ.

«սպորադիկ» շարունակությունը հարեթական սոնանտների ընդհանուր հնչափոխության<sup>1</sup>, իբրև նշանակողական-բառաստեղծական մի միտումի. սակայն դրա հնեարանական կացությունը, իբրև մեզ համար այժմ անգիտակցելի մի յերևույթ, դեռ առհավատչյա չի, վոր նոր լեզուն ևս այդ յերևույթը չի ունենալու, այդ ուղղությամբ ևս չի ընթանալու:

V. ՆՈՐ Ռ, Բ, Ա, Լ ԲԱՂԱԶԱՅՆԻ և ԶԱՅՆԱՎՈՐԻ ՄԻՋԵՎ

Այս հնչական յերևույթը հատուկ է գլխավորապես մեր բարբառների, ծնունդ սունելով հենց գրաբարյան շրջանում: Առաջանալով բառասկզբի բաղաձայնի և հաջորդ ձայնավորի միջև՝ ո, ր, ղ և լ հնչյունները միտում ունեն այժմ ևս շարունակելու իրենց բառաստեղծական ընթացքը. և այդ յերևույթը հնեարանական է միայն վորոշ վերապահությամբ, այն է, վոր այժմս չի գիտակցվում, բառասկզբում չի հայտնաբերվում, և կարելի չե ապացուցել միայն լեզվաբանական—համեմատական «պեղումների» շնորհիվ:

Այդ յերևույթի ետևությունը սա յե. որինակ, յեթե յեղել է մի պայմանական թՕՒ արմատ, դա կարող եր հիշած սոնանտների միջամտումով դառնալ պռոտ, պրոտ, պղոտ, պլոտ: Սկզբում այդ յեղել է կարծես թե զուտ հնչաբանական մի յերևույթ, մի փաստական կացություն, սակայն այլ և այլ պատճառների շնորհիվ ստանում է նաև նշանակողական հատկություն, իմաստաբանական դեր: Որինակ, մի պլշել (Երև. ՆրԲ. Շմ.) կամ պլշալ (Վան)՝ «չքերը հառելով սուր-սուր նայել՝ վոչնչով չի տարբերվում, ըստ իմաստի, հին պշեմ, պշնում բայից, կամ արար. (և Ղրբ.) հրեսիկ՝ «voici, ահավասիկ՝ վորը ստացվել է \*hesik ձևից=գրար. ահաւասիկ<sup>2</sup>: Բայց մենք վերցնենք այն դեպքերը, յերբ հնչական տարբերացումը՝ ր, ո, ղ, լ սոնանտների միջամտումով՝ առաջ է բերել նաև նշանակողական տարբերացում:

1. Դրինդ (Արար., Շիր.)՝ «ձեռքի ափի վերի փափուկ մասը» (Ամ., 171) = թանթուղ (Ղլթղչի, Արճեշ, Ալջվզ. id.): Արմատն է, ըստ իս, \*dind (<\*dend), վորի հավանական ընդհանուր նշանակությունն եր «փափուկ անոսկր միս». այդ արմատից ունենք գրաբարում՝ դրնդեղ՝ «կակուղ», դնդեր [հոգն.]՝ «թնթղուց, թնթուղ», արդի գավառական՝ դնդեղ (Բուլ. Շրկ.),

ռական (Տրապ., Նորնախ.)՝ երթամ > եշթալ, մարդ > մաշթ . . . : Պետք է ընդգծել, սակայն՝ վոր r || n ալտերնացիան ավելի նոր շրջանի յե պատկանում, քան r || y, վորը իսկական «հնեարանական» է:

<sup>1</sup> Արդյոք, չի՞ անդրադարձել սոնանտների հարեթական այդ ալտերնացիան նաև հրնդ-յեվրոպական արմատների վրա, յեթե ի նկատի ունենանք, որինակ, «baryg(—հարցանեմ)» արմատը, վորը ծագել է \*prki-ից («просить»), և «baryg(—հայցեմ)» արմատաձևը (= «выпросить»), r || y հնչափոխությամբ: Սակավ հավանություն կարող է ունենալ «հայց» արմատի սերելը «այց»-ից («иск»), ի > j > h նախդիրով:

<sup>2</sup> Կա՞ արարատյանում նաև հրէս, հրէդ, հրէն (կամ հրէ) = հրեսիկ, հրետիկ, հրենիկ՝ \*չեսիկ < \*հասիկ < (ա)հաւասիկ, ինչպես գրաբարում—հատարակ < \*հաւասարակ:

թնթողուց, թնթողուց (Ախլց.), թնթուղ (Ար.) = նախնեաց «դնդեր», առանց վոսկորի փափուկ միս (Ամատ., 168)<sup>1</sup>: «թանթուղ» (> թնթուղ) ձևը ստացվել է «\*դանդուղ» հին ձևից և վկայում է արմատի նաև \*dand- տեսակի մասին (\*dend- || \*dand- ?):

2. Կլոնջ (Պուլ.), կլոնձ (Ղրբ.) 'կղկղանքը բրգաձև կանգնած մեծ կտոր մը, թուքի մեծ կտոր մը, գունտ մը' (տես Աճ., 574). կլունծ (Ար.), կլոնծ (Շրկ.) 'սապոնի և նման իրեղինաց գունդ, աղբի կույտ' (տես Ամատ., 346): Ընդունելով այս ջ, ձ, ծ հնչյունները աստիճանաբար հետևանք, մենք այդ բառերի նախկին ձևը վերականգնում ենք klond- կամ klont- իբրև 'կլոր կտոր, գնդակ, КОМОК'. — հմմտ. Ղրբղ. կլոնդրակ 'ձյունի, ցելիսի ևլն գունդ. կնոջ գլխի սարք (Աճ., 374). փոխնձի ալյուրով և մեղրով շինած գլանածև հաց' (Բորչ. Լոտի — Ամատ. 345): Իսկ 1 հնչյունի միջամտությունը ընդունելով՝ նախկին ավելի հին ձև ենք սեպում kond- || kont նույն 'գնդակ' իմաստով. — հմմտ. գրաբ. կունդն, կունդ 'գնդաձև անիվ, ճախարակ, անվի գունդին ծակը ուր լիսեռը կը մտնա' (ԱռԲ.) կամ արդի՝ կոնդ (Ղրբ. Ղղխ) 'կոճղեղավոր բույսերու տակը մնացած հաստ գլուխը (սոխի, ճակնդեղի . . , տես Աճ., 592): Ըստ իս, այդ «կլոնձ || կլոնջ» ձևերից են առաջացել «ն»-ի սղմամբ և պարզացմամբ նաև — կլոզ (Ասլ. Արբ. Չն.), կոլոզ (Տր.) 'մարդու և քանի մը անասուններու չոր աղբը', իսկ այդ ձևից կրճատմամբ՝ նաև վանեցոց — կզաիկ 'յերեխայի մի կտոր կղկղանք՝ գետին ընկած' (Աճ., 567):

3. Կրէճ (Արար. Շրկ.) 'կոտրած կարասի, կժի, աքաշի և այլն տակ, վոր թաղում են բակի մի անկյունում և լցնում են մեջը ջուր, լակ՝ շան, կատվի, հավերի համար'. ըստ մշեցոց 'ձեթի հանքի մեջ շինած քառանկյունի փոքր փոս, ուր հում կտավատն են լցնում' (Աճ., 378). այդ նույն իմաստով այլևայլ բարբառներում հնչում են նաև կրին (Ակն. Բիւթ. Չն. Քղի . . , տես Աճառ., 624): Թեպետ կրէճ-ը ամանեղենների տակից է լինում, վորովհետև ամենամուրն ու կորությամբ հարմարը նա յե, սակայն «կրէճ» և «բոնձ» հոմանիշները հենց նրանով են տարբերվում, ինչպես Աշտարակում են բացատրում, վոր կրէճ-ը կարող է լինել ամանեղենների նաև այլ խոր կոր մասերը՝ հարմար հավերին և այլոց ջուր տալու (b'ony-ը միայն տակն է): Ընդունելով, վոր «կրէճ» ձևը նախնականն է (քան կրիճ-ը) և նշանակությամբ էլ 'ամանեղենների կորացած՝ գոգավորած մի մասն' է, մենք այդ բառի մեջ «Կ» հնչյունը համարում ենք նոր առաջացած, վերականգնելով սկզբնական \*կէն || \*կեն հարեթական e (է, Յ) հնչումով բառաձևը: Դրա հիմնական նշանակությունն է յեղել 'թրծած կավ կամ դրա կտորը' = գրաբ. խեց 'հողի աման', խեցի 'թրծած կավ, կղմինոր, և կտորը, կարծր կեղև խեցեմորթի', խեցատ 'աղյուսի կտոր' (նաև՝ Երև. Կր. Ղրբ. Տփ. — տես Աճ., 464), խեչափառ 'խեցգետի(ն)' ևլն ևլն: Հմմտ. վրաց. კობი (կեցի) 'глина, сковородка глиняная, глиняная посуда, черепица' կամ კობი (կեցի) 'череп,

<sup>1</sup> Ըստ Աճառյանի (եջ 348) — «թանթախ (Պրբ. Չրս.) 'կակուղ, փափուկ, անոսկր միս, վոր և թանթուխ, որինակ, մսին թանթուխ տեղեն ան'»: Բառավերջի «խ»-ն անշուշտ «ղ» հնչյունն է և ստուգաբանորեն «ղ» պիտի գրվեր:

костяной щит, напр. у черепахи' (Чуб., 606)<sup>1</sup>: Այդ ստուգաբանությամբ՝ կրէճ-ը այնպես ե հարարերում \*կեճ-(|| 'կեց') նախաձեին, ինչպես յերևի գրար. կրէժ-ը 'древесный клей' խէժ-ին:

4. Սոսիսձ (Վան) 'խանձված, չոր խոխիվ դարձած բույս' (Ամ., 294, Աճ., 492): «Սոսիսձ»-ը ստուգաբանորեն և հնչաբանորեն այնպես ե հարարերում խանձ-ել արմատին, ինչպես արար. դրինդ-ը՝ մյուս բարբառների թանթուղ-ին (խոխիսձ : խանձ=դրինդ : \*դանդ-ուղ):

5. Ճղօր (Բաղ., Վան) 'աղջկանց և տղոց որորվելու համար շինված կախորրան, balançoire.' (ՆորԲ.) 'փոքր յերեխաները մեջը քնացնելու համար պատե պատ կամ ծառե ծառ շինված որրան' (Աճ., 724): Այդ «ճղօր» ձևվից առաջանում են մի կողմից—ճղօրիկ (Վան), ճղօրտիկ (Վան), արար. ճլորթի (ըստ իս), մյուս կողմից—ճղօր (Բգ. Չն. Վան), ճոնօրիկ (Բր.), ջղջօր (Բուլ. Ապրն,—տես Ամ., 434)՝ ջ<ղ(լ) փոխանցմամբ: Հիմնական ձևն ե բոլորի՝ ճղօր, հարեթական կլորաշուրթ 0 հնչյունով. իսկ բուն մշակակությունն ե 'կախորրան, качели' (Վան, Մուշ...) և 'ճոճ, ЛЮЛЬКА' (ՆորԲ.), այսինքն 'ճոճվող իր': Հետևապես, յեթե ընդունենք, վոր «ղ» հնչյունը նոր ե առաջացել, արմատը պիտի լիներ ճոր-, վորը և պահվել ե ճխութանիայի հայերի մոտ—«ճորալ՝ նազիլ, կոտրտվելով քալել շորորալ»։ հմմտ. նաև «ճորիկ (Պլ.), ճոր (Պլ. Տգրն.), ճոր պար (Սրբ.), ճոր ճոր (Պլ. Վն.) =ճորելով պարել. մանկական խաղ մ'ե —մանկիկին յերկու թևերեն բրունելով յետ ու առաջ կը քաշեն՝ յերգելով ճորճորի յերգը» (տես Աճառ., 730)<sup>2</sup>: Հիմնական գաղափարն ե, կը նշանակի, այդ ճղօր<ճոր բառերի համար 'տարուբերվել, ճոճվել, качаться', վորը, հետևապես, անմիջապես չի կապվում 'կախ ընկնել' նշանակությամբ «ճոլ-» արմատի հետ (արար. ճոլակ 'շալակած կապոց', ճոլոլակ ընկնել 'քաշ ընկնել, կախ ընկնել' մի բանից բռնելով' . . , տես Ամատ., 443): Նոր հայկազյան բառարանի «ճոլորիկ»-ը (=յակուրջի) այնպես ե զարգացել «ճլորիկ || ճղօրիկ» ձևից՝ լիաձայնսփորությամբ, ինչպես հիշված «կոլոզ»-ը (Տրապ.) զարգացել ե «կլոզ»-ից (<կլոնձ)—կամ գավառական պոլոզ 'խոտի ելն դեզ (Բգ.), յերկար գղակ' (Տփ., Բալու) բառը՝ «պլոզ»-ից, վորը նշանակում ե Չմշկածագում 'քարի,

<sup>1</sup> Ըստ Մառի՝ կեց (>խեց) 'կալ' բառը և վրաց յՅՅՈ (կացի) 'մարդ' նույնանունը (a || e փոխանցմամբ) առիթ են յեղել Աստվածաշնչի հայտնի լեզենդայի, վոր մարդը կավից ե շինվել, ինչպես նույնը տալիս ե Պրոմեթեոսի վերաբերմամբ նաև հույն առասպելը (դա ել ե կավից մարդ ստեղծում և յերկնային կրակը գողանալով մարդուն շունչ ե պատճառում):

<sup>2</sup> Վոր «ճղօրը»-ը առաջացել ե «ճոր-» արմատից ('ճորալ, շորորվել')՝ այդ կողմնակի կերպով կարելի յե հաստատել «ճոճ» բառի ստուգաբանությամբ, այն վերապահությամբ սակայն, յեթե այդ բառի «Յ» հնչյունը յերկրաբառային բնույթ չունի (<աւ), ինչպես այդ մասին ցույց ե տալիս և վրաց յՅՅՈ (ճոճի), յՅՅՈԵՈ (ճոճինի) 'детские ходули висячая люлька' (Чуб., 1714), և յեթե բառի վերջին «ճ» բաղաձայնը առաջ յեղել ե «ջ» և առաջընթաց աստիճիլացիայի շնորհիվ՝ բառասկզբի «ճ»-ի ազդեցությամբ՝ դառել ե «ճ» (ճոճ < \*ճոջ — ինչպես՝ ճանձ < ճանջ): Այդ դեպքում հին \*ճսջ ձևը մենք կհամարեյինք բ > ջ սովորական փոխանցումով առաջացած ընդհանուր «ճոր-»(=качаться) բայարմատից, այսինքն — ճոր- > \*ճոջ- > ճոճ, կովկասյան (հարեթական) կլորաշուրթ 0 ձայնափորով: Վրացերենը այդ դեպքում փոխառություն ե:

հողի սրածայր կույտ՝ (Աճ, 913). Իսկ վերջինս, թերևս, «լ» հնչյունի միջամտությամբ ստացված լինի «պող» (=կոտոշ, ПОГ) հիմնական գաղափարից (վորից կրկնությամբ՝ նաև «պոպող» = «սրածայր իր», արար. բարբառում):

6. Սլուր (Սշակ, Աշար, Փարսի)՝ «սրածայր» ասվում է լեռան, գլխի, ժայռի, բլուրի մասին (Ամ., 592): Այդ ձևից ստացվել է, ըստ իս, սղլուր (Ոշ. Աշար. Փար)՝ «նեղ ու յերկայն (յերես). լսիրշ, յերես առած՝ (որինակ՝ սղլուր երես ուներ, սղլուր տղեք ուներ, *ibid.*<sup>1</sup>): Այսինքն՝ սղլուր-ը այնպես է առաջացել սլուր-ից, ինչես ճղլոր-ը՝ ճղոր-ից: Իսկ «սլուր»-ի նախարմատն ենք համարում «սուր» ածականը, ինչպես ճղոր-ինը՝ ճոր: Յենթարկվելով լիածայնավորության, սլուր ձևը դառնում է՝ սուլուր (ՆՆխ.), սուրուլիկ (Ախլք. Տր.), սուլուլիկ (Ակն. Արբ. Երև.) > սլուլիկ (Ախլց.) և այլն և այլն (Աճ., 281):

7. Շղարթ (>շղաթ), շղարջ՝ «ձմերուկի՝ սեխի՝ նարինջի կն Վերեն վար՝ յերկարությամբ կտրված շերտ՝ (Ղարաբաղում, տես Աճ., 832): Թե «շղարթ»-ը և թե «շղարջ»-ը յենթադրում են հին \*շղարդ ձևը, վորը «ղ» հնչյունի հավելումով առաջացել է \*շարդ ավելի հին ձևից (=շերտ). տես դրա մասին վերը (եջ 9-10) — \*շերդ- (\*շարդ-) || \*հերդ- (\*հարդ-) ակտերնացիան:

8. Պլոկ-ել (Երև. Ղրբ. Տփ.)՝ «կաշին, կեղևը, մորթը քերթել հանել. [փոխար.] կողոպտել, ունեցած չունեցածը թալլել» (Աճ., 913): Դրափոխությամբ («մետաթեզիս»-ով) այդ «պլոկել» բայը դառնում է—1) լոպկել (Խն.)՝ «քաշել քաշքշելով արմատաքի պոկել, փրցնել» (Մկ. Մշ. Վն.)՝ «տեռաղերծ սնել, կաշին ամբողջովին քերթել. փխր. կողոպտել (մարդ մը), պտուղներեն ամբողջապես մերկացնել» (տես Աճ., 434). 2) պլոկել (Ալքս.)՝ «պլոկել, կաշին ամբողջապես քերթել». 3) լպկել (ՆորԲ.)՝ «փետել, սլոկել, հավին փետուրները, կաշին քերթել» (Աճ., 440). 4) լոխպիլ (Խլ. Վն.)՝ «մարմնին մսերը կամ կաշին քերծվիլ. պատը ճեղքոտիլ» (վորից թերևս մշեցոց՝ լոխկել՝ «կաշին քերթել, ամբողջապես հանել, պլոկել» — տ. Աճ., 432): Այդ բոլոր ձևերի հիմնականն է plok-, վորը „l“ հնչյունի միջամտությամբ առաջացել է, ըստ իս, pok- նախարմատից = պոկել «փրցնել» (Ախլց., Երև., Լոռի, Ղղխ., ՆՆխ., Տփ., — տես Աճ., եջ 919):

9) Կռահ-ել (Պլ.)՝ «գուշակել, մտքով իմանալ». 2 (Բլ.)՝ «ուշադրություն դարձնել, ուշիվ նկատել». 3 (ՆՆխ.)՝ «նախազգալ (որինակ, հոգիս կռահեց, տես Աճ., 611): Այդ արմատին է պատկանում նաև՝ կռաժմունք (Ղրբ. Շուլ.)՝ «յիշոցք, անեծք, թոնթորանք» (որին., «Աստծու կռաժմունքը գլխին թափեց», - *ibid.*). Իմաստաբանական տեսակետից համտ. արդի արար. «ուշունց», գրար. յիշոցք՝ «իշոց, հայհոյանք» (ԱռԲ.) և յիշ-եմ բայը: „Կռահ-“ ձևի սկզբնական աղբյուրն է պարսկական a k a h՝ տեղյակ, իրա-

<sup>1</sup> Հմմտ., ըստ իմաստի, նույն «սուր» արմատից կազմված -եղ ածանցով սրեղվիլ բայը (ինչպես համեղ, զորեղ կն), վորը նշանակում է՝ «խիստ յերես առնել, լսլրշանալ (Արար., — տես Ամ., 600):

գեկ, осведомленный, վորը անցել է թե գրարարին ակահ ձևով ու նույն իմաստով և թե բարբառներին, ինչպես — ակախել (Մոկ.), ակխել (Վան) ախլել (Մուշ) 'քնից զարթնել, արթնել. իրագեկ լինել, ուշքի գալ' (Ամատ., 11): Պարսկական արդի ձևն է  $\bar{a} \bar{g} \bar{a} \bar{h}$ , համապատասխան պահլավական  $\bar{a} \bar{k} \bar{a} \bar{s}$  ձևին (ArmGr., 94):

Լինում են դեպքեր, յերբ ստուգարանորեն դժվար է վորոշել, թե վոր ձևն է նախնականը, Ի, Լ. հնչյուններովը թե առանց այդ: Որինակ, գրար. գոխ 'ցեխ', գավառ. գուխ 'ժահր, թարախ' (Մշ. Ար. Խոյ. Շրկ. Ապրն. Վն., — տես Ամ. 154) և մյուս կողմից՝ գախնոց 'աղբանոց, աղբ թափելու տեղ' (նոր Հայկ. Բառ.) կամ, որինակ, կռէժ, գավառ. կռոջ. . . և մյուս կողմից՝ խէժ, խիժ ևլն: Յերբեմն ել այդ Ի, Լ. հնչյունների ներմուծումը նաև այլ հանգամանք կարող է ունենալ, ինչպես, որինակ, Պոլսի «Կոխնձ»-ը և նույնիմաստ գրար. «կննիռ»-ը. առաջինը կարող էր նաև «կինձ» սկզբական ձևից գոյանալ, վորը պահել է արար. բարբառը — խինջ 'կամավ հավաքված յերեսի խորշոմ, կնձիռ, խիթ նայվածք' (Ամատ., 279), վորը յուր հերթին կիրճ 'ущелье' բառի տարբերակն է (տես եջ 21): Համեմատիր այդ վերջին տեսակետից վերոհիշյալ «խոինձ» յեվ «գրինդ» բառերը:

Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում դարար. և նուխեցոց «ճողպուր, ճողպուր» (=ընկույզ) բառաձևը յուր «դ» հնչյունով: Յեթե նակնական և իսկական ձևն է «ճողպուր > ճղուպուր», վորից է միայն առաջացել «ճողպուր» (լիաձայնավորությամբ, ինչպես՝ պլոզ > պոլոզ, կլոզ > կոլոզ, սլուր > սուլուր, ճղոր > ճոլորիկ ևլն), այն ժամանակ «դ» հնչյունը նոր զարգացած յերևույթ կարելի յե համարել, և ըստ վերոհիշյալ մեր որինակների՝ այդ \*ճոպուր (կամ \*ճուպուր) վերականգնելիք ձևը մենք կարող ենք տեսնել մինգ. քշծյորո (ճուրուրի) բառի մեջ, վոր նշանակում է 'շագանակ', գործածվելով նաև բուն վրացիների (քարթերի) մոտ, իրենց Գաձլո նույնիմաստ բառի հետ (Կյճ., 1715)<sup>1</sup>:

Ռ, ր, ղ, Լ սոնանտների «ինտերվանցիոն» դերը նրանով չի վերջանում, վոր կարող են յերկրբարբառ առաջացնել՝ մտնելով բառասկզբի բաղաձայնի և հաջորդ ձայնավորի միջև. դրանք հառաջանում են նաև յերկու բաղաձայնների մեջ և, կարծես թե, վանկարար դեր են խաղում, ինչպես, որինակ, բթեմ 'հրել' (Չաք. Սարկ., եջ 72)<sup>2</sup> և արդի արար. բռթել,

<sup>1</sup> Մինգրեկերենը վրացերենի հանդեպ ունի լիաձայնավորություն (полногласие) — սուլիչների հանդեպ՝ շչայիններ, — վր. Լ > մին. Ի, վր. Գ > մին. Օ: Բացի «ժարլի» || «ճուրուրի» ձևերից, համտ. նաև վրաց ժառանգ (ձաղլի) 'շուն' և մինգ. Ջոլոռո (Չողորի) - id., վրաց քրեձա (կրեբա) 'հավաքել' և մեզր. յորոռծյա (կորորուա) id., վրաց Լյուլո (սուլի) 'շունչ' և մինգ. Մյորո (շուրի) - id., վրաց ԿՅՅՈ (կայցի) 'մարդ' և մինգ. Կոհի (կոչի) - id. ևլն: Համտ. վրացա-հայկական — վրաց ԵՄՅՅՅ (սժավլա) 'սովորել' և մեր «սովորել», վրաց քրեջլո (ճրելի) 'пестроглазый' և մեր ճաղար (Չրբ.), ճուղուրենց (Վղրշ.), ճղրիկ. . . վրաց ԵյրՅՅ (խուրվա) = խորովել ևլն:

<sup>2</sup> «Հրամայեաց ծառայիցն հանել զնա արտաքս. եւ ծառայքն բթելով հանին ի պալատն» (Ամատ., 103): Կա նաև գավառական բոթել (Արար., Լոռի) — id., վորի համար համաթերեսուս. бодаться (? հնդեվր. \*bhodh-):

—կճեպ և արար. կլճեպ (Ա.մ., 344) > արդի խրճեպ, — պնկել և պոնկել, — արար. բընդել > բընդորել > բըլընդորել ‘անկանոն կարկտել’, — գրար. պշեմ (պշնում) և արար. պըլըշել ևլն ևլն. Համեմատիր այդ վանկարարության տեսակետից նաև արարատ. բառավերջի «ղ» հնչյունի առաջանալը հետևյալ դեպքերում — քիստղ (=գր. քիստ ‘ость’), կունծղ (=գր. կունծն), կոստղ (=վանեց. ոստղ<sup>1</sup> ‘վոստի արմատ’, Ա.մ., 529 և տրապեգունցոց ost -id.<sup>2</sup>):

Բայց այդ խնդիրների մանրամասն տնտղումը մեր տվյալ՝ հնեարանական՝ նպատակից դուրս է:

Մասնավորապես միայն պիտի ընդգծել, վոր ու (ր) և լ սոնանտների առաջանալը բաղաձայնի և հաջորդ ձայնավորի միջև տակավին շարունակվում է մեր այժմյան բարբառներում, այն ել՝ յերբ բառը բաղադրվում է ածանցով: Որինակ, արար. սոթ տալ ‘սայթաքել’ կամ փթ-ել (=գրար. փտ-իմ) արմատներից -ik կամ -uk ածանցներով ունինք սոթ-լ-իկ ‘скользящий’ և փրթ-ու-ուկ ‘гнилой’, վորտեղ «լ», «ո» հնչյունները այնպես են յերկբարբառ առաջացրել (-թլի-, -թոու-) ինչպես տեսանք բառասկզբի dri-(nd), klo-(nj) ևլն ձևերի մեջ: Մինչև իսկ այդ «լ», «ո» սոնանտները -ik ածանցի հետ բարդվելով (-լիկ, -ուիկ) ստանում են արդեն նշանակողական թեքում, առաջինը (-լիկ)՝ փաղաքշական (ոուս. -енький), յերկրորդը (-ուիկ)՝ անարգական, ազդվելով, թերևս, «լ»-ի փափկությունից և «ո»-յի կոշտությունից: Այդպես են, որինակ, Աշտարակում — սուտլիկ ‘врунишка’, կոկլիկ, շեկլիկ, շաղլիկ, հաստլիկ, կարճլիկ, նեղլիկ, բարալիկ (<\*բարակլիկ), թմփլիկ, թխլիկ.., և մյուս կողմից անարգական նշանակություններով — հուշտուիկ, ‘խրտչող’ (ձի..), հեվուիկ («հեվալ» բայից), լոթուիկ ‘обжора’ («լոթի»-յից), ցեթուիկ ‘շատ միզող յերեխա’ («ցեթել» բայից), հաստուիկ, մունդուիկ ‘անպիտան, паршивый’ ևլն: Համեմատիր նմանապես — աչլիկ ‘հաջողակ’, ձախլիկ ‘ձախ ձեռքով գործող, левша’ (բայց — ջրիկ ‘ջրհամ, թեթևսուլիկ’, կուզիկ сгорбленный, горбатый’, թիլիկ ‘слабосильный’).., վախ-լ-ուկ ‘վախոտ’ (վախ-լութունիցը ‘от страха’), խափ-լ-ուկ (փղքշ.) ‘խաբեբա’ (կա նաև խափլութուն).., ճղ-լ-անի (1, 2, 3... ճղլանի).., քաք-լ-ան, կուզ-լ-ան (վանեցոց), գողլան (Ղրբ.) ‘շուլան’ (Աճ., 246)..., գող-ո-էճ = գողի ‘ծուլլ’ (Արարատ., ըստ Ամատ., 146).., կլոնդ-ր-ակ (Ղրբ.) ևլն ևլն<sup>3</sup>:

Մենք կարծում ենք, վոր բերած որինակաները (դրինդ, կլոնծ, կրէն, խոինծ, հղոր, սլուր, պլոկել, կռահել..) միանգամայն հաստատում են ո, ր, դ, լ սոնանտների նոր դերը, յերբ առաջանալով բառասկզբի բաղաձայնի յեվ հաջորդ ձայնավորի միջեվ՝ դրանք ստեղծում են նոր բառածել յեվ յետո ել նոր նշանակություն, ինչպես վոր այդ միտումը շարունակվում է արդի բարբառներում՝ բառաածանցման ժամանակ:

Նման դեպք տալիս է հենց հնդեվր. նախալեզուն իրեն \*bhreg<sup>w</sup>- կամ \*bhreg<sup>w</sup>- (‘կոտրել, բեկել’), \*su- կամ \*syu- (‘шить, կարել’): ևլն որինականերով:

1 Ըստ հոդվածս շարող վանեցի գրաշարների՝ այդ բառը հնչվում է վոստղ:  
 2 Այդ ձևը հաղորդեց ինձ ուսանող Հ. Զիդարյանը:  
 3 Այդպիսի «ղ» ունի և գրաբարի «խայտաբղետ» բառը, իբրև \*խայտաբեա կրկնարմատ ձև հասարակ «խայտ»-ից (пятно), նման՝ հաստամեստ, բարձրաբերձ ևլն կրկնակ ձևերի:


Հմմտ. նաև վրաց v (w) հնչյունի նման առաջանալը, ինչպես — «ծվերի» (=ծայր), ծւրթա — ծվարթա (=կրթել), ծվեթի (=կաթ) - ծթուա (=կաթիմ), խվեղրի 'доля, надел' (=հերթ < հերդ), ճվարտալի 'չարախոս' (=ճարտար), մ-ծվանե (=կանաչ), խվիթքի 'մողեղ, կոկորդիլոս' (Աստվածաշնչում=հայ. խիթ, հոգն. խիթ-ք id.), խվինջի 'правий' և կենճի 'камышек' (=խիճ), ճվինթի 'носок у обуви' (=արար. քինթ -id.), խվլիկի 'մողեղ' (=խլէղ), խվիժի-րի 'обломки' (=արար. խժուել) ևլն ևլն:

Սոնանտների միջամտական՝ յերկրարբառացման՝ այս հայկական պրակտիկան, թե բառասկզբում և թե արդի բառածանցման մեջ, ունի ընդհանրապես խոշոր լեզվաբանական արժեք: Սա և նախորդ յերկու հնեաբանական յերևույթները ('սոնանտների ալտերնացիան յերկրարբառի մեջ, սիրիլանտների և սպիրանտների ալտերնացիան բառասկզբում) ընձեռնում են մեզ յերեք կարևոր ընդհանուր հետևույթներ:

Նախ, հնարավորություն և ստեղծվում այդ լեզվա-բնաշրջման յեղանակով թափանցել հայկական լեզվախմբի նախարիական («ուրարտա-խաղական») դրության մեջ, այնտեղ յեվս նման զարգացման ուղիներ փրկարելով յեվ հասկանալով:

Յերկրորդ, սոնանտների այս հայկական պրակտիկան յուր միջամտական ('յերկրարբառացման) յեվ հնչական փոխանցման կողմերով, կովան գտնելով յեվ այլ հարեթական կովկասյան լեզուններում, ընդառաջ և գնում հնդեվրոպական լեզվագիտության նվաճմանը այդ ասպարիզում:

Յեվ յերրորդ, հնեաբանական այս յերեք լեզվային յերեվույթներն ել շեշտում են լեզվի սոցիալ-հոգեբանական այն կողմը, վոր մարդու գիտակցությունից անկախ կերպով առաջացող նոր հնչատարբերակները, իբրեւ փաստական նոր կացություն լեզվի մեջ, հուժգինս նպաստում են հասարակության մեջ առաջացնելու նայեվ նոր նշանակություններ, նոր հոմանշություններ:



1. ԱՌԻԻԾ (ո, ու հոլովմամբ) ‘սոյում, лев’

Այս բառը հին արտասանությամբ և ուղղագրությամբ յեղել և «առեւծ», ինչպես ընդհանրապես հին «իւ» յերկրարբառը առաջներում գրվելիս և յեղել «եւ»<sup>1</sup>: Իսկ մեր «առեւծ» բառի «եւ» հնչյունակազմը բացի ձեռագրերի մեջ լինելուց՝ հատուկ և նաև ժողովրդական արտասանության, ինչպես Առձեռն Բառարանն և մատնանշում («գրի և Առեւծ, նոյնպէս հընչեալ՝ յար և նման սամկ.»):

Այդ «առեւծ» ձևը արդարացիում և, մեր կարծիքով, նաև իրեն բառի ծագումով՝ ստուգաբանությամբ, վորը հնդեվրոպական և:

Ընդունելով ըստ համեմատական քերականության, վոր բառի հոլովական ձևերը հանդիսանում են տեսակական ֆունկցիաները և սինտագմաները նույն բառի թեորեաթիկ ընդհանուր բնի հանդեպ, կախված լինելով հոլովական վերջավորություններից և շեշտից, մենք «առեւծ»-ը համարում ենք այդ բնաշրջումի հետևանքով առաջացած մի քարացած ձև, վորից արդեն պատմական շրջանում գոյանում են մյուս հոլովական ձևերը: Իբրև ուղղական հոլովի սինտագմա՝ շարահյուսակ, «առեւծ»-ը ունեցել և և իրեն հատուկ վերջավորությունը մեզ անհայտ բաղաձայնով և օ (ո) կամ լ (ու) ձայնավորով, յեթե ի նկատի ունենանք այդ բառի հետագա հոլովումը: Իսկ յերբ հնագույն, արդեն վոչ հնդեվրոպական, այլ «հայկական» շրջանում անհետանում և բառի ուղղական հոլովի ամբողջ վերջավորությունը, այսինքն՝ բացի բաղաձայնից նաև ձայնավորը (օ, լ), այն ժամանակ արտասանական նախկին «պաշարը» բաշխվում և ավելի քիչ վանկերի վրա, առաջ բերելով բառի վերջընթեր վանկում յերկար ձայնավոր (e), յեթե պատմական այդ մոմենտին լեզուն նման հնչյուններ ունեցել և, կամ յերկրարբառ՝ դիֆտոնգ (ew): Յեվ մեր «առեւծ» բառի վերջին վանկի «եւ» հնչյունակազմը հետևանք և «առեւծու» («առեւծու») ուղղական հոլովի վերջավորության անկման, իրեն անհայտ բաղաձայնով. վերջընթեր re- վանկը ար-

1. Տես Н. Марр, Грамматика др.-арм. языка, СПб, 1903, էջ 12, § 17, և համեմատիր, որինակ, «դիւցազն» առաջացած «դեւցազն» (богородный) ձևից, «բիւր» = սովետ. баеварə (պարթևական b e var), «աղբիւր» = հուն. φρεαρ (<\*φρε Fαρ), «ալիւր» = հուն. 'αλεύρον., ուր հայոց «iw»-ը ծագումով յեղել և «ew»:

դեն դառնում ե վերջինը, և e ձայնավորը, այսպես ասած, աճման ե յեն-  
թարկվում, ինչպես վոր այդ տեղի յե ունեցել—արտաւար, աղաւթ, ամաւթ  
ծանաւթ, արաւտ, հեւս, գիւտ և այլ բառերի մեջ (տես վերը «Հնեարանա-  
կան» մի քանի մնացորդներ հայերենում, § 1):

Այդպիսով, ուրեմն, վերականգնելիք հնագույն «առեծ» կամ «առե-  
ծու» բունը, կորցնելով ուղղական հոլովում յուր ամբողջ վերջավորությու-  
նը և յերեքվանկյան արտասանական նյութապաշարը բաշխելով սոսկ յեր-  
կու վանկերի վրա, առաջ ե բերում «առեւծ» փակ ձեր, վորը քարանում և  
և կայունանում, հետագայում ել վերածվելով «առիւծ»-ի:

Areco- (arecu-) նախնական ձևի վերջին o (u) ձայնավորները հոլովա-  
կան ցուցիչներ են, ուր „o“-ն, թերևս, մնացած լինի իբրև արական սեռի  
հատկացուցիչ ձայնավոր: Մնում ե arec, վորի սկզբնական a հնչյունը կա-  
րող եր թե հայկական հողում առաջացած լինել, վորովհետև հայերը p, n  
հնչյուններով չեյին սկսում զուտ հայկական ծագումով բառ (յեթե չհաշ-  
վենք «ոունգն—անգունք» բառը), և թե մնացած կարող եր լինել հնդեվրո-  
պական ժամանակաշրջանից: Այսինքն, բուն արմատը կարող եր լինել հնա-  
գույն նախահայկական շրջանում թե rec և թե arec: Հայկական «a» հըն-  
չյունը կարող ե անդրադարձնել յուր մեջ հնդեվրոպական \*r, ինչպես այդ  
տեսնում ենք—առ, դեռ, կռունկ, հեռի, հեռ, սիռեմ, տեռեմ., առնում,  
զառն, սառն, ձեռն, ջեռնում և այլն բառերի մեջ, ուր մեր «a»-ն ամենու-  
րեք համապատասխան ե այլ լեզուների «r» հնչյունին: Հետևապես, ըստ  
համեմատական հնչարանական որենքների, յեթե մեր «առեւծ»-ը վերածենք  
հնդեվրոպական նախատիպի, կստանանք \*areg<sub>1</sub>- կամ \*oreg<sub>1</sub>- (մեր «ծ» =  
հնդեվր. \*g<sub>1</sub>, մեր «ա» = \*a, \*o. տես ArmGr., էջք 407--408): Իսկ յեթե  
հայկական «առեւծ»-ը յուր նախադիր «ա» ձայնավորը ստացել և հետագա-  
յում, հայկական բնագավառում, այն ժամանակ մեր «-ռեւծ»-ը անմիջապես  
վկայում և հնդեվր. \*reg<sub>1</sub>- արմատի մասին:

Հնդեվրոպական այդ արմատը (\*reg<sub>1</sub>-) մեզ տալիս են լատի-  
ներեն rex (սեռ. reg-is) 'թագավոր' և սանսկրիտերեն rājan 'թագավոր'  
V\*reg<sub>1</sub>-ից, վորը նշանակել և 'ուղղել, ուղեւորել, կառավարել, ղեկավարել':  
Վոր հայկական «(ա)ռեւծ»-ը նախնականում նշանակել և 'իշխող, թագավորող,  
ղեկավարող', այդ մենք կարող ենք տեսնել նաև պարսկերեն شیر շիր (šēr)  
'առյուծ' բառից, վորը առաջացել և հին իրանական xšā(y)- արմատից  
'կարող լինել, vermögen' նշանակութամբ (= հին հնդկական ksayati  
'er herrscht, besitzt', տես Bartholomae, Altiranisches Wörterbuch, էջք 551  
—553): Հետևապես, սեմասիոլոգիական իմաստարանական տեսակետից ևս վոչ  
մի խոչընդոտ չկա մեր «առեւծ»-ը կապել լատ rex և սանս. rājan բառերի  
հետ:

Ինչպես ասվեց, հնդեվրոպ. \*reg<sub>1</sub>- արմատը սկզբնականում նշանակել  
և 'ուղղել, ուղղություն տալ', վորից արդեն առաջ և գալիս 'ղեկավարել,  
իշխել' նշանակությունը: Հվդեվր. V\*reg<sub>1</sub>-ը այդ սկզբնական նշանակութամբ  
պահել են շատ լեզուներ (արիական, հունական, լատինական, գերմանա-  
կան), տալով արմատի զարգացման յերեք աստիճաններ—\*oreg<sub>1</sub>-, \*reg<sub>1</sub>-,

(\*reg<sub>1</sub>-), \*rg<sub>1</sub>- Առաջին \*oreg<sub>1</sub>- ձևը մենք տեսնում ենք հուն. 'ορέγο 'протираю, протягиваю' և ավեստական arəza- 'ճակատամարտ' իսկապես 'աղմուկի՞' (Schlachtreihe, տես AirWb, 201-202) բառերի մեջ: Յերկրորդ \*reg<sub>1</sub>- (\*reg<sub>1</sub>-) ձևը տալիս են ավեստ. raz- բայը = գերմ. richten (նույնարմատ) 'ձգել, ուղղել, ուղեւորել, կարգավորել' (AirWb, 1514) և լատիներեն rectus 'ուղիղ', գոթական raihts (ibid.): Իսկ յերրորդ \*rg<sub>1</sub>- ձևը վկայում են ավեստ. arəzav- 'ուղիղ, հարթ' բառը<sup>1</sup> և հնդեվրոպ. \*rg<sub>1</sub>i-pyo- (<\*rg<sub>1</sub>iptyo-) 'արծիվ' բառը, վորը տեսնում ենք ավեստ. arəzifya- = սանսկ. rjipyá-, հին պարսկ. ارژیسوس (հույներին գրությամբ) և հայոց «արծուի» (=արծիվ) բառերի մեջ. այստեղ \*rgipyo- սկզբում նշանակել և 'ուղիղ վրա թռչող', իսկ Ավեստայում նշանակել է նաև մի լեռնաշղթայի անուն (իրբև 'ուղիղ վայր իջնող, круто низвергающийся'—(ibid.):

Հետևապես, մենք տեսնում ենք, վոր հնդեվր. այդ \*oreg<sub>1</sub>-, \*reg<sub>1</sub>- արմատը ունեցել է մի հիմնական նշանակութուն 'ուղղել, ուղեւորել', ինչպես միահամուռ կերպով վկայում են արիականը, հունարենը, լատիներենը և դերմաներենը. յերկրորդական ածանցական նշանակութունն է 'ղեկավարել, իշխել', վորից և 'թագավոր, առյուծ' ելն<sup>2</sup>:

Ստուգաբանական վոչ մի խոչընդոտ չունենք հայոց «առիւծ» բառը հնդեվր. \*reg<sub>1</sub>- արմատից սերելու նկատմամբ, վոչ իմաստաբանական (սեմանտիկայի) տեսակետից և վոչ ել հնչաբանական, յեթե ընդունենք, իհարկե, վոր այդ բառի «ւ» (w) հնչյունը նոր է առաջացել, հայկական հողի ծնունդ է, ինչպես այդ տեսնում ենք նաև մի շարք այլ բառերի մեջ (տես եջ 1—4):

\* \* \*

<sup>1</sup> Այդ ավեստ. arəzav-ի համարժեքափորն է գուտ պարսկ. ardav-ը Ardumanis հատուկ անվան մեջ, վորը իսկապես նշանակում է 'ուղղամիտ' (geradesinnig, AirWb, էջ 194), և վորը մենք փոխ ենք առել «Արգուման» նոր ձևով: Արդյոք, մեր արդակ 'ուղիղ' (վորից նաև մակ-արդակ) բառը փոխառութուն է այդ պարսկերեն ardav-ից, թե պիտի կապակցել արեելա-ասիական urdig 'ուղիղ' (aufrecht) և հարավոսական urdag 'զառիվայր ճանապարհ' (Steilweg) բառերի հետ (AirWb, էջ 350, ավեստ. arəđwa- բառին կից):

<sup>2</sup> Յեթե ղեկավարվենք ընդհանուր լեզվաբանական տվյալներով, մենք այդ հնդեվր. \*reg<sub>1</sub>- արմատը կարող ենք յուր ց<sub>1</sub> բաղաձայնի նկատմամբ արտերնացիայի յենթարկել և ստանալ \*rek<sub>1</sub>- արմատը 'յերկարացնել' իմաստով, ուր ց<sub>1</sub> || k<sub>1</sub> միջալեզվային հնչյուններ են (ձայնեղ ու խուլ). այդ յերկրորդ \*rek<sub>1</sub>- ձևին են տալիս սանսկրիտերեն raçmi բառը mi ածանցով), վորը նշանակում է 'ճառագայթ, սանձ' և պարսկ. راسن rasan բառը 'թուկ, պարան' նշանակությամբ, վորը և անցել է հայերին («երասան») ու արաբներին („rasan-un“): Արդյոք, այդ արմատները (\*reg<sub>1</sub>- || \*rek<sub>1</sub>-) գուտ հնդեվրոպական են, թե հատուկ են նաև այլ լեզվական սիստեմներին. կապ չունի՞, որինակ, հարեթական rk արմատը (հետալեզվային k-ով) այդ հնդեվր. \*rek<sub>1</sub>-ի հետ, յեթե ի նկատի ունենանք—1) պարսկ. ارغ arag (urug) 'թուկ' և ارغ rag 'ջր' (վորից հայոց «երակ»), ուր ց հնչյունը համապատասխան է պեհլեվական k-ին, և 2) հայոց «երկար» ու «երկայն» բառերը իրենց «երկ-» (<rk) արմատով:

## II. ԱՌՐՄ «մորմ» միջատը, фаланга

Այդ բառը այժմ միայն արարատյան բարբառին և հատուկ, վորից անցել և և դրականին: Գործ և ածել նաև Պ. Պոռշյանը («Կուլածաղիկ», էջ 231), իսկ հնուց հայտնի յև միջնադարյան հայոց լեզվում, «Վարդանա առակների» մեջ (տես Н. Марр, Сборники притч Вардана, СПб, 1895, գիրք II, էջ 332, § 342)<sup>1</sup>:

Մորմը խիստ թունավոր մի միջատ է, մեծ սարդի չափ և դրա նման (=ռուսաց фаланга). իսկ իբրև բառ նա շատ հին և և, մեր կարծիքով, հնդեվրոպական ծագումով է:

Morm-ը մենք բաժանում ենք յերկու ձևերի՝ մորֆեմների, այն և — mor- արմատի և -m- ածանցի, վորը հնագույն շրջանում անշուշտ յեղել և mo- . հետևապես, այդ բառը յենթարկվելիս և յեղել 0 հոլովման: Բառն այդպես ձևաբաժանելով, այսինքն, ընդունելով, վոր -m- հնչյունը արմատական չէ, մենք ի նկատի ունենք նախ դրա ծագումը և յերկրորդ՝ վոր հնդեվրոպական արմատների վերջում և ածանցներում անհնարին և յերկու սոնանտների անբաժան գոյակցությունը, ինչպես տվյալ դեպքում r և m հնչյուններն են: Mor- արմատը, մեր կարծիքով, անպայման պիտի առընչություն ունենա հնդեվր. \*merə- || \*mre- ‘մեռնել’ արմատի հետ, և morm-ը սկզբում նշանակած պիտի լինի ‘մեռցնող’ կամ ‘մահացու’, նման նոր պարսկերեն مار mar ‘ոձ’ բառին, վորը, ըստ իրանագետների, նույնպես այդ հնդեվր. \*merə- || \*mre- արմատին և պատկանում<sup>2</sup>:

<sup>1</sup> Այդ բոլորը հիշատակվում է Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան» գավառական բառգրքի մեջ (տես էջ 489): Ավելորդ չենք համարում բերել «Վարդանա առակի» այդ կտորը. «Սափիրա ակն՝ հանց խասիաթ ունի, թե զինքն ու գմորմն ի մին կճուճ դնես, յայնժամ սպանանէ գմորմն...», կամ— «Սափիրայն նշանակէ զբանն ի բերանս վարդապետաց և մորմն գմեղքն ի մարդիկ»:

<sup>2</sup> Պրոֆ. Հ. Բեդելյանը իմ ուշադրությունը հրավիրեց «մորմ» բառի այն կիրառության վրա, վոր տեսնում ենք միթարյանների մոտ, բնագիտական գրվածքներում, ինչպես, որինակ, Գ. Մենեվիշյանի «Բուսաբանություն» գրքի մեջ (Վիլեննա, 1887): Ինչպես գրքի հեղինակն և ասում, մորմազգիները (solanaceae)... «ըստ մեծի մասին, խիստ թերեցուցիչ թունավոր անկեր են և յերկրիս տաք կողմերը կը գտնվին». որինակներ և բերում — 1) Գնդարմատ մորմը կամ ազնիվ գեանախնձորը (Solanum tuberosum), 2) Մազոտ մորմը (S. villosum), 3) Կոզուկ կամ քաղցրադասն մորմը (S. Dulcamara), 4) Սև մորմը (S. nigrum), 5) Վոսկեխնձորը (S. Lycopersicum), 6) Դարասղպեղ, սպանիական տաքղեղ (Capsicum annuum), 7) Շնախաղող կամ մուրի, մահացու մորմ (Atropa Belladonna) 8) Բուն նիկոտին կամ ծխախոտը և այլն (թվով 12): «Մորմ» բառի այդ անհայտ (ըստ բարբառների) գործածությունը, իբրև «թունավոր բույս» միանգամայն ընդառաջ է գնում մեր ստուգաբանությանը՝ «մահացու» նշանակությամբ:

Հնդեվր. այդ նույն արմատին են պատկանում, ինչպես հայտնի յե, նաև հայոց—1) մեռ-անիմ 'մեռնել', 2) մարդ (do- < \*to-ածանցով), վորը նշանակել է իրոք 'մահկանացու, e-мерт-ный' = հնդեվր. \*mórto(s), ինչպես և հուն. βροτος, սանսկր. mártā-, ավեստ. marāta- ևլն. (ArmGr. էջք 472—473), 3) մահ կամ ավելի հին մարհ = սանս. mrtyú-, ավեստ. marəθyu- ևլն. (ibid.):

Մենք կարծում ենք, վոր այդ նույն հնդեվր. \*merə- || \*mrē- արմատին պիտի հատկացնել նաև հետևյալ յերկու բառերի ծագումը—1) մորթ (ո հոլովումով) կամ մորթի (եա || ւո հոլովումով)<sup>1</sup>, վորոնք կարող են արտացոլել հնդեվր. \*mor-tho- կամ \*mor-th-iyō- ձևերը, և 2) արարատյան «մրո» ('oidium') գավառաբառը, վոր խաղողի հիվանդության մի տեսակն է. հմտ. հին ուսաց моръ 'ժանտախտ, моровая болезнь' բառը, վոր հնդեվր. նույն արմատին է պատկանում:

\* \* \*

### III. ԽԼԷԶ 'մողես, ящерица. շողուկ, слизень'

Այս բառը գավառաբարբառներին է միայն հատուկ և շատ տարածված է. առաջին նշանակությամբ (մողես, ящерица) գործ են ածում ըստ Աճառյանի՝ Ակն, Արաբքիր, Դավրեժ, Յերևան, Յերզնկա, Խարբերդ, Կարին, Ղազախ, Ղարաբաղ և այլն (տես նրա «Գավառական բառարան», էջ 470), իսկ յերկրորդ 'շողուկ, слизень' նշանակությամբ գործ են ածում Բյուլթանիա (ibid.) և Որդու<sup>2</sup>:

Ծագմարանական-ստուգարանական տեսակետից այդ խլէզ բառը, ըստ իս, շատ կարևոր ու հետաքրքիր տեղ է զբաղում, ունենալով առնչական կետեր թե արիական, թե թյուրքական (ТЮРКСКИЙ) և թե կովկասյան-հարեթական լեզվաշխարհների հետ:

Յեթե վերցնենք թյուրքական լեզուները, այստեղ մեր «խլէզ» բառի հետ շատ մոտ կապակցություն են կազմում, գեթ արտաքուստ՝ հնչական տեսակետից, ջաղաթայերեն کلاس kelās 'род земной ящерицы' և ավթայերեն کلسکی keleski 'ящерица' (որինակաները ըստ Ռադլովի): Սխալ կլիներ, մեր կարծիքով, յենթադրել թե հայերեն «խլէզ»-ը փոխառնված է թյուրքականից, նախ այն պատճախով, վոր հարևան թյուրքա-աղբրեյշանյան

<sup>1</sup> Այս գոյականից է արդեն կազմվում մորթեմ բայը, վորը նշանակել է 'մորթագերծանել' և հետո՝ մորթել. այդ վերջին նշանակությունն է այժմ գործածականը:

<sup>2</sup> Ըստ Աճառյանի (էջ 470)—«**խլէզ** Ակն. Արբ. Դվ. Երև. Երզ. Խրբ. Կր. Ղզ. Ղրբ. [խլէզնը], Սեր. Վն. Տր. Տփ 'մողես, քարաթոթոշ,' քէքթէնքէլէ, 2. Բիւթ. 'շողուկ, սիւմիբլիւ պէօճէյի, (առանց պատեանի՝ խղունջի պէս սողուն մէ)»: Որդվում շողուկի իմաստով գործ ածելու մասին հաղորդեց ինձ մեր Պետական Համալսարանի գասախոս Հ. Զորյանը:

բարբառներում այդպիսի ձև մենք չենք գտնում<sup>1</sup>, յերկրորդ՝ այդ բառը շատ ու շատ և տարածված հայկական բարբառներում, այն ևլ իրարից շատ հեռու ընկած վայրերում, յերրորդ՝ ձևարանական կառուցվածքը -էզ (ez) վերջածանցով հատուկ և հայերենում նաև այլ անուններին, վորոնք կենդանիներ են նշանակում, և չորրորդ՝ խըլ- (xəl-) արմատը, կարծես թե, պատկանում և նաև արիական ու կովկասյան-հարեթական լեզվաշխարհներին<sup>2</sup>:

Բայց մեր «խլէզ»-ը յուր խըլ- մասով, վորը անշուշտ արմատն և, կապվում և, ինչպես ասվեց, նաև արիական և կովկասյան լեզուների հետ:

Առաջինի՝ արիականի վերաբերմամբ մենք ի նկատի ունենք ոսերի xil-in, xel-un ‘ползти’ (= սողալ) բայը, վորից կաղմված և և xelagä ‘змея’ (= ոձ, տես W. Miller, die Sprache der Osseten, էջ 61): Վսեվոլոդ Միլերը այդ xil- || xel- արմատը կապակցում և սանսկր. khel- (khelati) արմատի հետ վորը նշանակում և իրեն ասելով ‘качаться, вертеться’, թեպետ ինչպես տեսնում ենք՝ նշանակությունները բավականին հեռու յեն իրարից—‘որոր-վել, պտտվել’ և մյուս կողմից ‘սողալ’: Հայոց «խլէզ»-ը յուր խըլ- (xəl-) արմատով կարելի յե կապակցել այդ ոսական xil- || xel և սանսկր. khel- (= ? վխտալ, խլպլտալ) ձևերի հետ այն վերապահումով միայն, յեթե խըլ- անշուշտ վանկը առաջացել և խիլ- ձևից:

Կովկասյան գուտ հարեթական լեզուներն ևս անմասն չեն այս «ազգակցական» խնդրին: Վրացերենը ունի xvlivi, xvliki (xwliki) ‘ящерица’ (= մողես, տես Чубин., էջ 1745), ինչպես նաև m- նախածանցով՝ mxvlivi ‘хамелеон, ящерица’ (ibid., էջ 937): Դրանց հետ անշուշտ ազգակից են նաև լազերի xalali ‘ящерица’ (Վիժէ-յում) կամ mxalali -id. (տես Н. Марр, Грам. чанского яз., СИБ, 1910, էջ 228) և թերևս xuxuli ‘крот’ (Խոպեյում ibid., էջ 255): Վրացերեն այդ—xvlivi, xvliki, xwliki ‘ящерица’ և mxvlivi ‘хамелеон, ящерица’ բառերի բուն արմատն և xwl-( > xvl-), վորը ալտերնացիայի կտրոց և յենթարկվել մեր «խլէզ» բառի արմատի հետ, յեթե ընդունենք, վոր իըլ- անշուշտը առաջացել և խոլլ- շեշտավորից, թեպետ վրաց այդ xwl-( > xvl- ) արմատի w (v) հնչյունը կարող և նաև նոր առաջացած լինել (տես էջ 28):

Թեպետ մեր «խլէզ» բառի հետ յուր ‘մողես’ նշանակությամբ, կարծես, արտաքին՝ հնչյունական՝ առնչություն են կազմում, ըստ արմատի,

<sup>1</sup> Մեր հարեան թյուրքականում գտնում ենք «քերթենքելե», վորը Արարատյան դաշտի թուրքերի մոտ դարձել և «քյաստանքյալա»: Ըստ Iusti-laba-յի քրդական բառարանի՝ քրդական چيان (չիան) բառը փոխառնված և թուրքերից և նշանակում և ‘մողես դժբախտաբար, քրդական բարբառը մեզ մոտ չի նիշած:

<sup>2</sup> Զագաթայերենի և հայերենի փոխազգեցության տեսակետից մատնանշելի յեն հայերեն—իլ, իլիկ (‘веретено’) և ջաղաթ. يَلَنگ ileng ‘веретено’ բառերը, ուր հայերենի -իկ, վերջածանցը (իլ և իլ-իկ) ավելի շուտ վկայում և թյուրքականի (ջաղաթայերենի) ազգվելու մասին և վոչ թե ընդհակառակը: Իսկ առնչություն չկա՞ արդյոք թյուրքական «քերթենքելե» բառի «-քելե» մասի և ջաղաթայերեն kelas բառի միջև:

վրաց xwliki (և xvliivi) բառը յուր xwl (xvl-) արմատով (? < xl-) և ուսա-  
կան xil- բայը, իսկ ըստ ամբողջական կազմի՝ նաև թյուրքական kelas  
(keles-ki) բառը, սակայն կան մի շարք լեզվական տվյալներ, վոր այդ «խլէզ»  
բառի սկզբնական որրանը նախարիական Հայաստանը պիտի համարենք:

Նախ՝ -էզ (-ez) վերջածանցի խնդիրը: Այստեղ «է» հնչյունը վոչ թե  
յերկրարբառային և (<ey), այլ պարզ կովկասյան (հարեթական) e հնչյունն  
և, նման ուսաց Յ-ին (ЭТОТ 'այս') կամ e-ին (СЕЛИ 'նստեցին') ևլն: Այդ  
ածանցը գտնվում և մի շարք «կենդանական» տերմինների մեջ, ինչպես —  
մողէզ (գրաբարում) 'մողես', վորից, ըստ իս, գավառական «մողոզիկ» id.<sup>1</sup>,  
— գավառական սնկաջ լորէզ (=նապաստակ)<sup>2</sup>, կողլէզ 'խղունջ' (Գյումուշ).  
'խղունջի խեցին' (Բբ., տես Աճ., 588), դղէզ (Մուշ, Վան, Սիսի.),  
'մեղու և իշամեղու (վայրի մեղու) (Ամատ., 166-167), բզէզ (անալոգիայով  
«բզզալ» բնածայնական արմատից), տղէզ (Նորբ.) 'մեղու' (Աճ., 1026) նույն-  
պես բնածայնական «տղզալ» բայից ևլն: Կենդանիների անունների այդ-  
կերպ կազմվելը մեզ տարորինակ չպիտքե թվա: Հմմտ. հայերենում «-էտ»  
ածանցը (կովկասյան e-յով) — առնէտ, կրէտ 'oca', բրէտ 'բոռ ОВОД', օկոէտ  
(Վան) 'սկյուն' (Ամ., 602) և այլ բառերի մեջ: Նման բան մենք տեսնում  
ենք, որինակ, հնդկա-իրանականում, ինչպես — ավեստ. vazarā- 'գորա', ուսա-  
կան xelagā 'ոձ' (xelun 'սողալ' արմատից), սանսկր. urāga 'ոձ', nagā- id.,  
vihaga- 'թռչուն', antariksaga- id. (antāriksa- 'ողային տարածություն, էթեր'  
բառից), turaga- 'ձի' (tvar- 'ճեպել, շտապել' բայից) ևլն ևլն. հմմտ. նաև  
հնդեվր. \* (a) l o p e k<sub>1</sub>- || \* laupek<sub>1</sub>- 'աղվես' բառի կազմությունը:

Յերկրորդ, այդ xəl- խըլ-(էզ) արմատի խնդիրն և: Հայկական հողում  
ևս այդ արմատը ուժեղ կովաններ և գտնում: Պիտի յենթադրենք, վոր մի  
ժամանակ հայերը ունեցել են \*խըլ(-ամ) բայը 'սողալ, զեռալ' նշանակու-  
թյամբ (վորից և խըլ-էզ). այժմ կա այդ արմատի միայն կրկնակի ձևերը  
(intensiv- iterativa), ինչպես — «խլվլալ (Ալշ. Մշ. Վն.) 'շարժիլ, երերալ.'  
Ամպեր կը խլվլան. Ատամս կը խլվլայ. 2 (Տր.) գեղեցիկներու սիրուն նա-  
զելաքայլ ճեմելը. Հարսը խլվլալով կուզայ. 3 (Լոռի) նստած տեղը անհան-  
գիստ ըլլալով՝ միշտ վոտքի ելլել 4 (Երև.) վխտալ, եռալ, զեռալ. 5 (Լոռի,  
Վան) աչքը շլանալ, շաղուել, գէշ տեսնել» (Աճ., 472): Դրանից են նաև  
Արար. խժվժալ 'զեռալ, իրար անցնել' (լ > ժ փոխանցումով), խլպլտալ  
(Երև. Տի.) 'շարժուիլ, թուլալ'. Չուկը ջրումը խլպլտում և» (Աճ., ib.),  
ուր է հնչյունը նոր և, ինչպես և գրաբարի խլրտամ 'մեղմ շարժիլ, խլրտիլ',  
խղուրրտիւն=խլղուրրտիւն (=խլտվրտիւն) 'խլրտիլ մը բազմության կամ  
թռչնոց, ճղտոց, շփոթ, ձայն' ևլն: Մեզ համար անտարակույս և, վոր

<sup>1</sup> Ըստ Աճառյանի Գալ. Բառարանի (եջ 792), մողոզիկ բառը հատուկ և Մարաշի և  
Վանի բարբառներին: Սուրմարվում և Ապարանում մենք լսել ենք «մողոզիկ» ձևով, վորը  
յուր այդ «բ» նոր հնչյունով անցել և Սուրմարլի (Չոռ գյուղ) և Ապարանի (Ջարջարիս գյուղ)  
յեղիղներեն իբրև makizark:

<sup>2</sup> Այդ բառը մենք վերցրել ենք հայկական բարբառներից, սակայն տեղը չենք  
նշանակել:

«խլէզ»-ը այս հայկական—կովկասյան (խալդա—ուրարտական) չձեռնարմատից և ծագել, վորն այդչափ ձևերով և փոփոխություններով այժմս ել գործածական է:

Մնում է քննել «խլէզ» բառի 'շողուկ, խղունջ' նշանակությունը: Այդ դեպքում ևս վոչ մի դժվարություն չի կարող լինել, յեթե ընդունենք, վոր խլէզ ('շողուկ, խղունջ') բառի արմատն է նույն 'զեռալ, խլվլ' նշանակությամբ չձեռնարմատը, վորը և խլէզ 'մողես' բառինն էր, թեկուզ սկզբում այդ արմատը բնածայնական լիներ, վորով և առնչություն է կազմում վրաց (xvliki-xvlivi) և արիական (xilin, khelati) ձևերի հետ: Հետեւապես, «խլէզ» սկզբում նշանակել է 'զեռուն', յենթարկվելով իմաստական տարբերացման ըստ վայրերի: Այդպես են նույն չձեռնարմատից կազմած գոյականները, ընդհանուր 'զեռուն' գաղափարից սերված, ինչպես—խղունջ խլուրդ 'крот' ու խլիրդն 'քաղցկեղ. пак', կամ ըստ այժմյան բարբառների՝ խլուրդ (Ախլց) 'փոքր մողես', խլրդուկ (Բիւթ.) 'խլուրդ', խլնրուկ (Ակն) 'խղունջ' ուր խլճրուկ < \*խլրջուկ < խլրդուկ, խլմուկ (Մուկ. Ալաշ. Ապրն) 'խլուրդ'. հմտ. ըստ իմաստների այլազանության կարիճ 'скоorpion' և Ղրբ. կարիճ 'խեցգետին' (Աճ., 556), գալ. քարաթոշ, աքրաթաթոշ 'մողես' և քարթալոշ, քարթոշ 'խղունջ' (Աճ., 1103), լորտու (Ակն, Կեյվե, Համշ.) կամ լորտունուկ (Խոտրջ.) 'կողինջ, խղունջ' (Աճ., 736) և մյուս կողմից զրարարի և արդի (Արար.) լորտու 'уж':

«Խլէզ»-ը յուր այդ յերկրորդ նշանակությամբ ('շողուկ, խղունջ') հայերից անցել է, ըստ իս, ասորիներին և արարներին, իրրև փոխառություն, վորպիսին են ասորական x l e z o n a 'Schnecke' (=слизень, улитка), արար. halazun (տես Hübsch., ArmGr., էջ 305, ուր հեղինակը գրում է նաև „Letztere Wörter schwerlich echt semitisch“):

Մասնավորապես պիտի նկատենք, վոր խլէզ և խղունջ բառակազմությունները մի յեն. առաջին դեպքում -էզ (-ez) ածանցն է կովկասյան (հարեթական) պարզ e հնչյունով, իսկ յերկրորդ դեպքում՝ -ունջ (< \*ուջ || \*ոջ): Այդ -էզ և -ունջ < \*ուջ (|| \*ոջ) ածանցները ալտերնատիվ ձևեր են e (resp. i) և o (resp. u) ձայնավորներով, ինչպես նույնը (զ || ջ) կա հավանորեն նույնարմատ<sup>1</sup>—կողլէզ (Գյումուշ. Տրապ.<sup>2</sup>) 'խղունջ' բառի մեջ, վորը ունենալով նոր «լ» հնչյուն (տես էջ 22) և առաջանալով \*կողէզ հին ձևից =գավառական կողինջ || կողլանջ նույն նշանակությամբ բառաձևերին. համեմատիր նաև—զրար. կուէզ || կուէժ 'խէժ' և մյուս կողմից արդի գավառական կոոջ (Վղրշ.) -id.: իսկ ըստ ձայնավորների ալտերնացիայի հմտ. գավառական—պլէճ և պլոճ 'փոքր կարտոֆիլ ևլն' (Ամատ., 558), —բենձիկ և բոնձիկ 'խեցեղեն ամանի կոտրած վոռքը' (Աճ., 201), —ճլէզ || ճլուզ || ճիլազ 'վտիտ' (Ամատ., 435) ինչպես՝ կողլէզ || կողինջ || կողլանջ,

<sup>1</sup> «կողլէզ»-ը այնպես է առաջացել «\*կողէզ»-ից, ինչպես «մղրէզ»-ը (Ար., Վան. — Խ. մմատ., 484) 'շեկ այժ' առաջացել է «մղէզ» ձևից (Աճատ., 786), կամ մշեցոց «մկլէզ»-ը Աողէզ-ից (Ամ., 483): իսկ կ || խ համար հմտ.—1) կնճիո || խինճ 'խորշ, ձոց', 2) կուէժ || խէժ, 3) կայտան || խայտամ, 4) գալ. կինճ || խիճ, 5) կճեպ || խրճեպ...


<sup>2</sup> Ըստ ուսանող Հ. Զիգարյանի:

— գրաբարի կճիճ || կճուճ = խժիժ || խժուժ, — գրաբարի և արդի կորիզ և գավա-  
 առական կողինձ ‘հաստ փայտեայ կեղևով կորիզ’ (ծիրանի, սալորի...) և կո-  
 դունձ ‘գիհի ծառին կեղևը’ (Աճ., 588 – 589)<sup>1</sup>, — գավ. կոինջ || կուունջ || գուուզ  
 ‘գանգուր’ (Ամատ., 155), — քճէճ || քջուջ (անել), — կոթոինջ || կոթուունջ,  
 — հավ-նինջ || հավ-նուունջ ելն ևլն, ուր «ն» հնչյունը նոր և առաջացել այդ  
 ջ(ճ)-յերի առաջ, ինչպես են շուունջ, աղանջ, ճանջ, մրմուունջ, շրշուունջ, տրտուունջ,  
 խրխինջ, աղինձ (եղինձ), կինձ, Առինջ ևլն: Հմմտ. հակ -իկ || -ուկ ածանցի  
 նման փոխանցումը, ինչպես — մլիկ (Բուլ. Մշ. Վան) || մլուկ (Ար.) ‘թախտա-  
 րիթի, КЛОП’ (Ամատ., 481) — կամ մրիկ (հար. Սիփ. Սոյ) || մրեկ (Վան)  
 || մրուկ (Ար.) ‘միջուկը փխրած, սևացած, մուր դարձած ցորեն և հիվանդու-  
 թյունը’ (Ամ., 494) — կամ գրաբ. բղուկ ‘բղուղ’ || բղիկ ‘բղիղ’ (Աճ., 195) ևլն:

Այս բոլոր վերոնկարագրյալը մեզ հաստատ կուվան և ծառայում  
 պնդելու, վոր «խլէզ» բառը յուր յերկու նշանակությամբ էլ ‘մողես. խղունջ’  
<sup>1</sup>) ունի կովկասյան ծագում ընդհանրապես (հմմտ. վրաց xvlivi, xvliki)  
 յեւ հայկական (խալդա – ուրարտական)՝ մասնավորապես, յատկապես ըստ  
 կազմության, <sup>2</sup>) առաջացել և xəl- ‘խլվյալ, խլրտալ’ արմատից նշանակելով  
 սկզբում ‘զեռուն,’ ինչպես յեւ այլ «կենդանական» տերմինները (խլուրդ,  
 խղունջ, խլմուկ...), յեւ <sup>3</sup>) մուտք և գործել իբրեւ փոխառություն նայել  
 այլ լեզուների մեջ (ասոր.-արար. xlezona ‘խղունջ’, թերեւս ջաղաթ.  
 kelas ‘մողես’...):

<sup>1</sup> Վերջածանց -էզ > -իզ ունենք վոչ միայն այդ «կորիզ» բառի մեջ. հմմտ.  
 հակ — կուէզ || կուիզ ‘խէժ, խիժ’, — մողէզ || մողիզ, — բղէզ || բղիզ, — գավառ. կոճղէզ (բույս և «КЛУБ-  
 НЕВАЯ» ?) || կոճաղիզ (Աշտար.), — բարխէժ (Ար., Շրկ. Բուլ. Մուշ) ‘կրնկի վրա գոյացած կոշտ  
 ժահրոտ վերք’ || բարկիճ id. (Սոյ, Իզդ., -տես Ամ. 670) ևլն: Կա և հատուկ գավառական -ուզ  
 վերջածանց, ինչպես — լուուզ, պլուուզ, ճլուուզ, տոուուզ, խլուուզ (|| խլուշ), կուտոուուզ... ածական-  
 ներում: Հմմտ. -էճ || -իճ ածանց — բրուէճ («թուշուն անստոյզ», Ամատ., 94., ըստ խս = XOX-  
 латая բրուկ ‘XOXOL’ բառից), բուէճ ‘բու’, (գրաբ.), ուտիճ ‘ցեց’ (գրաբ.), մունիճ (Մշ.  
 Վան) ‘տիզ, клещук’ (Ամատ., 490), կարիճ ‘скорпион’, բաղիճ ‘клоп’ (Տփ.) ևլն: -էզ (-իզ)  
 || -էճ (-իճ) ձևիչով ունենք և վոչ կենդանական տերմիններ, բայց ածականներ, ինչպես  
 — ալլէզ պլլէզ (նորն.) ‘թեթևալիկ’ (Ամ. 13), կոռէճ || գոգոէճ, ‘գողի’, մոճողէզ (բույս և),  
 բողիճ (բոսի կաթն և), տուէճ (Վան) ‘ուժասպառ’...

<sup>2</sup> Կովկասյան մյուս լեզուներում ‘մողես’ բառի համար մեզ հայտնի յեն լեռնական  
 հրեաների malʕuc (մալղուճ), ուտիական milʕone, չեչենական melqu: Ըստ յերևույթին  
 դրանք իրանական ծագում ունեն, առաջանալով \*mareguc ձևից, ուր m a r պիտի նշանակեր  
 ‘ոճ’ (= պարս. مار), իսկ -g u c դրափոխությամբ նույնը պիտի լինի, ինչվոր բրդական  
 -jok մասնիկը marejok (مارچوك) ‘leopard’ բառի մեջ. հմմտ. բրդական m ā r g i s k  
 (مارگسك) ‘լորտու, уж’ իսկապես ‘կանաչ ոճ’ (տես Iusti-Iaba): Այդ -g u c (-g u c) < jok  
 վերջամասի նշանակությունը մեզ անհայտ և. հավանորեն իրանական մի բառ լինի («մար և  
 ջուկ» և իրաֆեաուլ): Հայկական բարբառները ‘մողես’ բառի համար ունեն և այլ տերմին,  
 այն և՛ բարաթոշ, բարաթոթոշ, արբաթոթոշ..., վորոնք անշուշտ կովկասյան ծագմամբ բա-  
 սեր են հմմտ. յերկրորդ -թոթոշ մասի հետ թերես վրաց ჯოჯო ‘մողես’ (? < \*dodo):



ЦЕНА

АIII

881